Azg Ազգ

30 ՄԱՐՏ 2005 ՇԱԲԱԹ 55 (3221)

Վոլկերի զեկույցը չի ամբաստանում Կոֆի Անանին կոռուպցիայի մեջ

Երեկ ուշ երեկոյան ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հանձնվեց «Սնունդ նավթի դիմաց» ծրագրում նկատված ֆինանսական խախտումների վերաբերյալ իր դեմ եղած ամբաստանությունների մասին պատրաստված զեկույցը, որը, ինչպես ավելի ուշ պարզվեց զեկույցը պատրաստող ճննիչ հանձնաժողովի նախագահ Պոլ Վոլկերի տված մամլո ասուլիսում, Կոֆի Անանին չի ամբաստանում կոռուպցիայի մեջ: Փոխարենը գլխավոր քարտուղարին անփութություն է վերագրում Իրաքի նկատմամբ ՄԱԿ-ի հաստատած «Սնունդ նավթի դիմաց» ծրագրի կատարման վերահսկողության գործում: Մասնավորապես, զեկույցը գտնում է, որ հիմնավոր ապացույցներ չկան այն մասին, թե գլխավոր քարտուղարը տեղյակ էր որդու՝ Կոջա Անանի մութ գործարքներից, որոնք 10 միլիոն դոլարի անօրինական շահույթ են ապահովել նրան եւ զվեյցարական մի բանկի «Սնունդ նավթի դիմաց» ծրագրից:

Ինչպես հայտնի է, ընդհանուր կարծիք էր ստեղծվել, որ Վոլկերի զեկույցը կվճռի Կոֆի Անանի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում մնալ-չմնալու հարցը:

Ղարաբաղյան հիմնախնդիր. ինքնահանգստացումը վտանգավոր է նույնիսկ հաղթողի համար

ԿԱԲԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Երեկվանից խորհրդարանում սկսվեցին «ԼՂ հիմնախնդիր. կարգավորման ուղիներ» խորհրդարանական լսումները: 1993 թվականից առ այսօր առաջին անգամ հիմնախնդրի պետական մակարդակով լսումներ են կազմակերպվում: Դրանց մասնակցում են ԼՂ իշխանությունների ներկայացուցիչներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտնականներ: Լսումներին չի մասնակցում հանրապետության նախագահը:

Իհարկե, դժվար է ակնկալել, որ երկօրյա քննարկումների ընթացքում Ղարաբաղի հակամարտության մասին վերջնական ու միասնական հայեցակարգ կամբողջանա, սակայն առաջական ինչ-ինչ խնդիրների հարցում տեսակետների ու դիրքորոշումների հստակեցում գոնե կլինի:

Լսումներին մասնակցում է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահության նախկին անդամ, ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրով Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ, դեսպան Վլադիմիր Կազիմիրովը:

Տես էջ 2

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋ

«Քանի դեռ հայ ժողովուրդն ունի իր պահանջը շարունակելու կամք, կհասնի իր իրավունքներին»

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Մեր մաղթանքն է, որ հայ ժողովուրդը վերականգնի իր սահմանները, տիրանա իր պատմական հողերին եւ ստեղծի ազաս, անկախ եւ միացյալ Հայաստան», Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ 12 արաբ ցեղախմբերի աշիրեթապետների աղոթից հետո բոլորի անունից ասաց ալ թայ ցեղախմբի աշիրեթապետ Մոհամմադ ալ Ֆարեսը:

Հյուսիսային Սիրիայի ազդեցիկ աշիրեթապետների պատվիրակությունը ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության եւ ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի անդամների ուղեկցությամբ երեկ այցելեց Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Նրանցից ամենամեկն ասելիք ուներ, որովհետեւ իր հետ բերել էր սեփական գերդաստանի հիշողությունները թուրքերի ջարդերից մազապուրծ գաղթական հայերի ու նրանց սովալլուկ որբերի մասին:

Տես էջ 3

Թուրքական թերթի կարծիքով, 1915 թ. ողբերգությունը «սկսվել» է հայերին տարագրելու օրենքը դեռեւս չընդունված

ԱՆԿԱՐԱ, 29 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայկական հարցի նկատմամբ եղած «ծխածածկույթը վերացնելու» նպատակ հետապնդող թուրքական «Հուրիեթը» գրել է, որ 1915 թ-ի ողբերգությունը սկսվել է Օսմանյան Թուրքիայում հայերին տարագրելու մասին օրենքը դեռեւս չընդունված:

Թերթը գրել է, որ Բալկաններում ջախջախված Օսմանյան Թուրքիայում 1913 թ-ի հունվարի 23-ին իշխանության եկած «Իթթիհաթ վե թերաքի» (Միություն եւ առաջադիմություն) կուսակցության ղեկավարներ Թալեաթը, Էնվերը եւ Ջամալը, նկատի ունենալով Մեծ Թուրան ստեղծելու իրենց գաղափարին Գերմանիայի խոստացած աջակցությունը, սկսեցին նոր ռազմական պատրաստություններ տեսնել Ռուսաստանի դեմ՝ կովկասյան ուղղությամբ եւ Սեւ ծովում պատերազմելու ու ծովի հյուսիսային շրջանները գրավելու նպատակով: Այդ պատերազմում հայկական հարցի լուծումը դրված էր թուրքական 3-րդ բանակի վրա, որը պետք է վերացներ անկախ պետություն ստեղծելու համար պայքարող եւ այդ կուսակցության կողմից «դավաճան ազգ» հայտարարված հայերին: Էնվերի առաջին գործողությունը, ըստ թերթի, այն է եղել, որ նրա 1915 թ-ի ապրիլի 24-ի հրամանով զինաթափվել են թուրքական բանակում ծառայող բոլոր հայ տղամարդիկ, իսկ Սամբուղում մի գիշերում բանտարկվել 2 հազարից ավելի հայ մտավորականներ, որոնց մեծամասնությունը ոչնչացվել է անմիջապես: Դրանից հետո, Էնվերը ներին գործերի նախարար Թալեաթին 1915 թ-ի մայիսի 2-ին մի հեռագիր է ուղարկում, որում հրամայում է նրան երկու շաբաթվա ընթացքում ամբողջ Անատոլիան մաքրել հայերից՝ «քշելով» նրանց «թուրքական» սահմաններից դուրս՝ դեպի Կովկաս կամ Արեւելք: Ըստ թերթի, Էնվերի հեռագրում ասվում է. «Ոչ մի խոչընդոտներ չկան՝ ապստամբ հայերի ընտանիքներին եւ ապստամբության գոտու ժողովրդին սահմաններից դուրս շպրտելու հարցում, իսկ նրանց տեղը սահմաններից ներս պետք է բերել մահմեդական տարրերին»: Այսինքն, դեռեւս հայերին տարագրելու մասին օրենքը չընդունված, սկսել էին հայերին աքսորել, գրել է թերթը, հավելելով, որ այդ օրենքն այն ժամանակվա սովթան Մեհմեթ Ռեշաթը ստորագրել է 1915 թ-ի մայիսի 27-ին: Թերթը հայտնել է, որ հետագայում իր հուշերում Թալեաթը «զղջացել» է հայերի նկատմամբ իր վարմունքի համար, եւ գրել է. «Ռազմական զգուշությունից բացի այլ բովանդակություն չունեցող այդ տարագրությունն անխիղճ եւ անգութ մարդկանց ձեռքում վերածվեց ողբերգության: Նպատակ չունեմ թաքցնել այդ գործողությունների նողկալիությունը»: «Թալեաթի այդ «խոստովանանքն» այլեւս ուշացած էր, տարագրված հայերի մեծամասնությունը ոչնչացված էր արդեն», գրել է թերթը եւ բերել հայերին տարագրելու մասին երեք կետից բաղկացած օրենքի բովանդակությունը, որը հետեւյալն է.

«Տարագրությունը ղեկավարող հրամանատարներին եւ զինվորներին թույլ է տրվում տեղում ոչնչացնել իրենց չենթարկվողներին, կամ տարագրվողներին պաշտպանել փորձողներին:

Բանակի, կորպուսի եւ դիվիզիայի հրամանատարները կարող են կասկածելի թվացող գյուղերի, ավաններ եւ թաղամասերի հայ բնակչությանն առանձին կամ էլ խմբերով տեղահանել իրենց բնակության վայրերից:

Օրենքն ուժի մեջ է հրապարակման օրվանից»:

Հայաստանը աշխարհի «անբախտ» երկրների թվում

ՍՏՈԿՀՈԼՄ, 29 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Համաձայն վերջին ուսումնասիրությունների, որ իրականացրել են շվեդական World Values Survey ընկերության սոցիոլոգները, ամենաերջանիկ մարդիկ Երկրի վրա ապրում են Պուերտո-Ռիկոյում, որը կոչի է Կարիբյան ծովում՝ գտնվելով ԱՄՆ-ի խնամակալության տակ: Եվ դա չնայած ցածր եկամուտներին, գործազրկությանը եւ հանցավորությանը:

Հետաքրքրական է, որ աշխարհի ամենաուժեղ եւ զարգացած երկրի՝ ԱՄՆ-ի բնակիչները «երջանկության» մակարդակով գտնվում են սոսկ 15-րդ տեղում 82 երկրների մեջ, որ մասնակցել են սոցկհոլմյան հարցումներին: Ընդամենը ուսումնասիրության ընթացքում հարցման է ենթարկվել մոլորակի ողջ բնակչության 85%-ը ներկայացնող 120 հազար մարդ:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել է հետեւյալ կարեւոր միտումը. հասարակական հարստության աճի հետ աճում է այն ընբռնման մակարդակը, որ բնակչության լավ ինքնազգացողությունը ավելի կարեւոր է իրենց եկամուտներից: Իրականում դա նշանակում է, որ մարդը կնախընտրի հետաքրքրական աշխատանքը բարձր վարձատրվող աշխատանքից, իսկ երջանկա միջավայրի պաշտպանությունը՝ այլընտրանքային օգուտից:

Առավել «անբախտ» ազգերի թվում փլուզված ԽՍՀՄ հանրապետություններն են (Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան) եւ Արեւելյան Եվրոպայի սոցիալիստական ճամբարի երկրները (Ռումինիա, Բուլղարիա, Ալբանիա): Ստորեւ բերվում են այն երկրների անունները, որոնց բնակիչները ամենաբախտը եւ ամենաիշն են գոհ իրենց կյանքից: «Երջանիկ» երկրներն են՝ Պուերտո-Ռիկոն, Մեքսիկան, Դանիան, Իսլանդիան: «Անբախտ» երկրներն են՝ Ինդոնեզիան, Զիմբաբվեն, Ուկրաինան, Հայաստանը, Ռուսաստանը:

Սուրբ Ներսես Շնորհալու շքանաներ կրոնասեր տիկնանց

Մարտի 29-ի երեկոյան Մայր աթոռ Սբ. Էջմիածնի վեհարանի հանդիսությունների սրահում Բեյրութի «Սբ. Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման» 8 անդամների շնորհվեց Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանը: Հանդիսությունը բացեց Մայր աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Տ. Ներսես արք. Պոզաջյանը՝ անդրադառնալով «Սբ. Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման» աստնաջեռտիի Միմի Հարությունյանին, Գոհար Խաչատուրյանին, Վեհանուշ (Վեհան) Պեսիրյանին, Ֆրիդա Սարգսյանին: Այս չորս շքանշանակիրները չէին կարողացել ժամանել Հայաստան: Իրենց շնորհակալական ու երախտագիտության խոսքը հղեցին Ամենայն հայոց հայրապետին շքանշանակիրները եւ հույս հայտնեցին, որ էլ ավելի եռանդուն կնվիրվեն ազգի հոգեւոր դաստիարակությանը...

Միջոցառմանն իրենց հրաշալի երգն ընծայեցին «Տաղարան» համույթի երաժիշտներն ու երգիչները՝ կատարելով գեղեցիկ ու հուզիչ հայկական ժողովրդական երգեր, տաղեր ու շարականներ Սեդրակ Երկանյանի գլխավորությամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՐՅԱՆ

Ընթացիկ

«Լեռնային Ղարաբաղի խնդիրը ռազմական լուծում չունի»

Հավաստացած է Վարդան Օսկանյանը

«Լեռնային Ղարաբաղի խնդիրը ռազմական լուծում չունի: Եթե այդպես լիներ, այս հարցը լուծված կլիներ: Մեկ անգամ արդեն պատերազմել ենք եւ հայկական կողմը հաղթել է: Կոսովոյի խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու փորձ արած Սերբիայի իշխանությունները տեսնում ենք՝ որտեղ են», երեկ ԱԺ ընթացող «ԼՂ հիմնախնդիր. կարգավորման ուղիներ» լսումների իր ելույթում համոզմունք հայտնեց ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանն ու հավաստիացրեց. «Որեւէ մեկը որեւէ մեկին որեւէ լուծում չի կարող պարտադրել: Համոզված ենք, որ միակ լուծումը այսօր հնարավոր է գտնել բանակցությունների սեղանի շուրջը՝ երեք կողմերի կոմպրոմիսային տարբերակով»: Դրան խանգարում են Ադրբեջանի մախիմալիստական պահանջներն ու համոզմունքը, թե ԼՂ հարցը իր տարածային խնդիրն է: Մինչդեռ հակամարտության սկզբում հայկական ուժերի հսկողության տակ Ղարաբաղի տարածից դուրս տարածքներ չկային: Դրանք այդպիսին դարձան հենց ադրբեջանական ագրեսիայի պատճառով եւ այսօր ծառայում են ԼՂ անվտանգության ապահովմանը: Ու չնայած Ադրբեջանն այսօր ձգտում է հարցի կարգավորումը տեղափոխել այն կառույցներ, որոնք իմքնորոշման եւ տարածային ամբողջականության խնդիրների բախման դեպքում կարեւորում են տարածային ամբողջականության սկզբունքը, սակայն ԼՂ հարցը պետք է դիտարկել դրանից դուրս, քանի որ ԼՂ-ն պատմական իրավական փաստարկներից զատ ունի իմքնորոշման եւ պետականության 15 տարվա պատմություն, որին ամեն օրվա գումարումը ավելի է դժվարացնում պատմության անիվի շրջումը: Դրան ձգտում է ադրբեջանական կողմը՝ հույսը դնելով իր նավթի ուժով եւ մեկուսացված Հայաստանի տնտեսական խնդիրների միջոցով հայկական կողմին զիջումներ պարտադրելու վրա»:

Ասվածը ներկայացնելուց հետո Վարդան Օսկանյանն ընդգծեց, որ դժվարությունները հաղթահարած եւ զարգացման փուլում գտնվող Հայաստանը չի փոխել խնդրի կարգավորման հարցում իր դիրքորոշումը եւ պետք չէ մոռանալ, որ յուրաքանչյուր զիջում նախ պետք է ընդունի ԼՂ ժողովուրդը, որն արդեն ապացուցել է, որ ի վիճակի է առանձին պետություն ունենալու: Մարդու իրավունքների լայն հնարավորությամբ գայթակղելով եւ տնտեսական առավելությունների խայծով միջազգային ասյանների փորձը՝ լինի ԼՂ ժողովրդի անվտանգությունը: Սրանք խնդրի հեռանկարային կարգավորման սկզբունքներն են, իսկ առաջնայինը ԼՂ ինքնորոշման միջազգային եւ Ադրբեջանի կողմից ճանաչումն է, որից հետո հնարավոր կլինի սկսել հարցի կարգավորումը ներառյալ եւ ռազմական գործողությունների հետեւանքների վերացումը, հավաստեց Վարդան Օսկանյանը: Նա ելույթը սահմանափակեց հույսով, որ երկու երկրների նախագահներն ապրիլին կայանալիք հանդիպմանը ԱԳ նախարարների աշխատանքի ընթացքում համաձայնության չարժանացած հարցերի եզրերն էապես կկարողանան մոտեցնել եւ շարունակել բանակցությունները խնդիր ունենալով ամենակարճ ժամկետներում հասնել ԼՂ հարցի բավարարմանը:

ՆԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ղարաբաղյան հիմնախնդիր...

1-ին էջից

«Այն, ինչ ուզում եմ ասել, դուր չի գա այս լսարանին, բայց ես դուր գալու համար չէ, որ եկել եմ այստեղ», նախապես հայտարարեց նա եւ բավական կոշտ դիտարկումներ արեց մեր պետական քաղաքականության ոգու ու բովանդակության վերաբերյալ. «Այսպիսի բարդ հակամարտության պարագայում իմքնահանգստացումը խիստ վտանգավոր է նույնիսկ նրա համար, ով իրեն հաղթող է համարում»:

Կազիմիրովը սկսեց նրանից, որ հայկական մամուլում հաճախ են հանդիպում որակումներ, դարձվածներ, որոնք ամենեւին չեն նպաստում կարգավորմանը: «Ազատագրված տարածքներ» հասկացությունը ոչ միայն անիմաստ, այլեւ անթույլատրելի է ինչեցնել խաղաղ պայմաններում եւ խաղաղ ճանապարհով խնդիրը կարգավորելու փորձերի ընթացքում: «Ինչպես կարող է նման արտահայտություն թույլ տա այնպիսի բանական, զարգացած ինտելեկտուալ ազգը, ինչպիսին հայերն են, միգուցե ավելի զարգացած, քան մենք՝ ռուսներս»:

Կազիմիրովի համոզմամբ, խնդրի լուծման փաթեթային տարբերակի կիրառումը մոտ ապագայում անիրատեսական է: «Ղարաբաղյան ախտանիշով» վարակված ռուսասանցի նախկին միջնորդը եկել է այն եզրահանգման, որ պետք է ավելի շատ կենտրոնանալ փուլային կարգավորման սկզբունքի վրա, բայց ոչ այնպիսին, ինչ առաջարկում է ադրբեջանական կողմը. «Սկզբում իմը տվեք, հետո կպարզաբանենք ինչն ինչոց է, գուցե այն, ինչ ձերն եք համարում, նորից մերն է»: Կազիմիրովյան լուծումը «փոքրիկ փաթեթների գործարկմամբ բազմափուլ, ասիճանական կարգավորման տարբերակն է»:

Հիմնախնդրի առանցքում, ըստ Կազիմիրովի, պիտի տեղադրել բոլոր հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքը:

Քննարկումների ընթացքում հնչած բազմաբնույթ դիտարկումները, որոնք, ի դեպ, երբեք էլ ծայրահեղ չէին, միասնական էին մի կետում եւս՝ Ադրբեջանի կազմում Ղարաբաղի գոյությունը բացառվում է:

PHOTOLURE

Կարծր քննադատություն հնչեց արտգործնախարարության հասցեին, որ զինադադարի 11 տարիներում հիմնահարցի հետ կապված որեւէ վերլուծականի պատվեր չներկայացրեց Գիտությունների ակադեմիային, մինչդեռ դրա կարիքը հաստատես կլիներ այս տարիների ընթացքում: Այս տարիներին ոչ մի քայլ չի արվել ադրբեջանագիտություն ստեղծելու ուղղությամբ, մինչդեռ հակառակորդին հաղթելու համար նախ լավ պիտի ճանաչել նրան:

Դրսի աշխարհում Հայաստանի դեսպանները եւս, իրենց ռազմավարական ու հայեցակարգային մոտեցումներում գործում են տարերային, չհամակարգված: Ադրբեջանը մեզնից առաջ է անցել տեղեկատվական, քարոզչական ոլորտում: Այստեղ ահռելի ճանակությամբ հրատարակվում եւ աշխարհով մեկ ցրվում է գրականություն, ուր Հայաստանի փոխարեն նշվում է Արեւմտյան Ադրբեջան անվանումը, իսկ Երեւանը ներկայացվում է իբրեւ դրա քաղաքներից մեկը:

Իհարկե, մենք չպետք է նույն սկզբունքով գրեր հրատարակենք, բայց գոնե ճշմարտությունը աշխարհին հարկ է ներկայացնել: Մեր դիվանագիտության կաղալը հանգեց նրան, որ այսօր Ադրբեջանը հարցը ներկայացնում է ընդամենը իբրեւ 2 պետությունների տարածային վեճ:

ԼՂՀ ներկայացուցիչները ելույթ կունենան այսօր, օրվա երկրորդ կեսին:

Մեծ տարողությամբ ավտոբուսները դարձյալ հուսախաբ արեցին

Ե՞րբ կլինի դրանց ժամանման մասին խաղաղապահարանի նոր հայտարարությունը

Երկու շաբաթ առաջ Երեւանի խաղաղապահարանի տրանսպորտի վարչության պետ Տիգրան Ղազարյանը հերթական հայտարարությունն արեց մայրաքաղաքի տրանսպորտային սպասարկման բարելավման համար մեծ տարողությամբ ավտոբուսների անհրաժեշտության, դրանցից 10-ն առաջիկա օրերին Հայաստան հասցնելու եւ եւս 10-ի վերաբերյալ նոր պայմանավորվածություն ձեռք բերելու մասին: Դա տրանսպորտի վարչության պետի եւ խաղաղապահի նմանատիպ ուղիղ 128-րդ հայտարարությունն էր, որը երեւի դարձյալ արվեց այն հույսով, որ ավտոբուսներն, ի վերջո, կդադարեն իրենց թանկացնելուց եւ ինքնուրույն կժամանեն Երեւան: Քաղաք, որտեղ նրանց այդքան սիրում են եւ անհամբեր սպասում: Սակայն ի զարմանս խաղաղապահարանի ղեկավարների, դա այս անգամ էլ տեղի չունեցավ: Ավտոբուսներն ավելի աներես դուրս եկան, քան նրանց սպասող երեւանցիները:

Ընդ որում, ոչ մի կերպ Հայաստան չեն հասնում ոչ միայն նոր 40 կամ 100 (նայած թե որ օրն ինչ թիվ են ասել խաղապահարանի պաշտոնյաները) ավտոբուսները, որոնց ձեռքբերման վերաբերյալ իբր պայմանավորվածություն էր կայացել Մինսկի ավտոգործարանի ղեկավարների հետ, այլեւ 10-15 տարի Եվրոպայում աշխատածները: Դեռեւս նախորդ խաղապահի եւ Լիոնի խաղապահ պայմանավորվածությամբ Հայաստան բերվելիք 40 ավտոբուսներից միայն 22-ն են տեղ հասել: Հասկանալի է, որ Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապվելու կոմունիկացիոն խնդիրներ ունի, սակայն այն մեկ-երկու տարին, ինչ խոստումներ են տրվում նոր կամ հին ավտոբուսներ բերելու, բավարար էր դրանք մի քանի անգամ Հայաստան բերելու եւ տանելու համար: Իսկ եթե յուրաքանչյուր անգամ հայտարարված ժամկետին ավտոբուսներն իսկապես գային Հայաստան, ապա հիմա դրանցով ապահովված կլինեին ոչ միայն մեր, այլեւ տարածաշրջանի բոլոր մայրաքաղաքները:

Կարծում ենք, ընկճվել պետք չէ: Երեւանի խաղապահն ու տրանսպորտի վարչության պետը շուտով հերթական մամուլի ասուլիսի ժամանակ կրկին հանդես կգան մեծ տարողությամբ ավտոբուսների անհրաժեշտության եւ առաջիկա 10 օրերին դրանց հերթական ժամանման մասին: Մնում է միայն հուսալ եւ... սպասել կանգառում մինչեւ կարողանաս խցկվել քեզ անհրաժեշտ երթուղայինի մեջ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գազի բալոնի հետ անզգույշ վարվելուց տեղում մահացել է

Ինչպես տեղեկացանք արտակարգ իրավիճակների վարչության լրատվական կենտրոնի օպերատիվ տեղեկագրից, մարտի 27-ի ժամը 15:00-ի սահմաններում Արմավիրի մարզի Արզատ գյուղի բնակիչ՝ 1961 թ. ծնված Գետրգ Սահակյանը «ԳԱԶ-52» մակնիշի մեքենայի գազի սնուցման համակարգից ցանկացել է լիցքավորել իր տան կենցաղային գազի բալոնը: Լիցքավորման ընթացքում առաջացել է պայթյուն, որի հետեւանքով Գետրգ Սահակյանը տեղում մահացել է:

Մ. ՄԱՆԿԱՐՅԱՆ

Երանի եկեղեցի շինողաց

Երեկ Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղում տոն էր: V դարում կառուցված Սբ. Հովհաննես-Կարապետ բազիլիկ եկեղեցին խորհրդային շրջանում վերածվել էր խոտի պահեստի: 7 տարի առաջ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս. Աջապահյանը, այցելելով Լեռնակերտի կիսավեր եկեղեցի, դիմում է Վեհափառ հայրապետին՝ եկեղեցին վերանորոգելու խնդրանքով: Շատ կարճ ժամանակ անց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսի առաջարկությամբ եկեղեցու վերանորոգման աշխատանքները սանձնեց բեյրութահայ խաչատուրյանների ընտանիքն՝ ի հիշատակ ընտանիքի ղեկավար Արամ Խաչատուրյանի (ազգասեր եւ միութենական գործիչ): 2002թ. սկսվեցին շինարարական աշխատանքներն անվանի ճարտարապետներ Վարազդատ Հարությունյանի, Ռաֆայել Եղոյանի, շինարար Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ, համայնքի ու լեռնակերտցիների բարեհաճությամբ: Պայմանավորվածությունն արդեն իրականություն դարձավ, մեծ շուքով օծվեց ու սրբագործվեց Լեռնակերտի Սբ. Հովհաննես-Կարապետ եկեղեցին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս. Աջապահյանի ձեռամբ, թեմի հոգեւոր դասի եւ առաջնորդարանի սպասավոր սարկավագների օգնությամբ: Եկեղեցու մուտքը, կնունքի լողավազանն ու սուրբ սեղանը գինով, ջրով ու Սուրբ մյուռոնով օծելուց հետո մատուցվեց առաջին Սուրբ պատարագը, որի ընթացքում հնչեց նաեւ սրբազանի պահպանիչ աղոթքը:

Սուրբ պատարագից հետո սրբազանն իր քարոզում հատուկ շնորհակալություն ու բարեմաղթանքներ հղեց բարերարներ Գոհար, Հարութ, Շահե, Նար Խաչատուրյան ընտանիքին, որոնք իրենց ամուսնու ու հոր հիշատակը հավերժացնելու համար նոր տեսք ու շունչ տվեցին եկեղեցուն, որն այսուհետեւ կծառայի ուխտատեղի ոչ միայն լեռնակերտցիների, այլեւ հարեւան գյուղերի բնակիչների համար:

Ինչպես տեղեկացրեց Լեռնակերտի գյուղապետ Մովսես Մովսիսյանը, այժմ գյուղն ունի 1500 բնակիչ, 300 տնտեսություն, հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ ու արտագնա աշխատանքով: Շիրակի մարզպետ Ռոմիկ Մանուկյանի եւ համայնքի ղեկավարների շնորհակալությունը բարերար Գոհար Խաչատուրյանին այն էր, որ նա այսուհետեւ համարվեց Լեռնակերտի պատվավոր քաղաքացի:

Շիրակ աշխարհում սպասված է Խաչատուրյան ընտանիքը, տկն Գոհարի անունն է կրում իրենց հիմնադրած «Գոհար» երգչախումբը, որի գեղարվեստական ղեկավարն է մաեստրո Սեդրակ Աբգարյանը:

Հոգեհանգստյան կարգից հետո Գյումրու «Գոհար» երգչախումբը միջոցառման առիթով շարականներ կատարեց՝ նվիրելով Խաչատուրյան ընտանիքին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լուսագրողների սենյակ / հեռ. 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

150 մլն դոլար ճաղոնացիներից

Վարկային ծրագրով կկառուցվի նոր, ժամանակակից էներգաբլոկ

Անցնախադեմ բնութագրեց երեկ Հայաստանի կառավարության եւ Ճաղոնիայի միջազգային համագործակցության բանկի միջեւ կնքված վարկային համաձայնագիրը էներգետիկայի նախարար **Արմեն Մովսիսյանը**, ըստ որի, ճաղոնական կողմը Երեւանի ՋԷԿ-ի վերակառուցման նպատակով կտրամադրի մոտ 16 մլրդ իեն (150 մլն դոլար): Վարկն արտոնյալ է, տրվում է 0,75 տոկոսով եւ 40 տարի ժամանակահատվածով, որից 10 տարին արտոնյալ ժամանակաշրջան է: Տրամադրված գումարով Երեւանի ՋԷԿ-ի տարածքում կկառուցվի համակցված ցիկլով շոգեգազային էներգաբլոկ:

Ինչպես պայմանագրի ստորագրման ժամանակ նշեց էներգետիկայի նախարարը, Երեւանի ՋԷԿ-ը կառուցվել է 60-ական թվականներին եւ նրա շահագործման ժամկետը 25-30 տարի է: Բացի այդ, հին տեխնոլոգիաներով աշխատող կայանի օգտակար գործողության գործակիցն էլ ցածր է: Այսպես, 1 կվտ/ժ էլեկտրաէներգիա ստանալու համար ծախսվում է 370-400 գրամ գազ, իսկ ստացվող էլեկտրաէներգիայի ինքնարժեքը կազմում է 16,5 դրամ: Վերակառուցման ծրագրով նախատեսվում է կառուցել 250 մգվտ հզորությամբ շոգեգազային կոմբինացված ցիկլով եւ բնական գազով աշխատող էներգաբլոկ: Այն հնարավորություն կտա նույն 1 կվտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրության համար ծախսել կրկնակի փիչ՝ 160-220 գրամ գազ, իսկ արտադրված էլեկտրաէներգիայի արժեքը կկազմի 7-8 դրամ: Այնուհետեւ տարեկան կնստեսվի 19 մլն դոլար վառելիքի խնայողության հաշվին, իսկ էլեկտրահաղորդման ցանցերում փոխհոսքի կրճատման շնորհիվ եւս 1 մլն դոլար: Երկուսուկես անգամ կնվազեն մթնոլորտային արտանետումները եւ կբարձրացվի կայանի սեյսմակայունությունը:

Արմեն Մովսիսյանը նաեւ հայտնեց, որ ստորագրման արարողությունից հետո կանցկացնեն շինարարությունը սկսելու մրցույթներ, իսկ շինարարությունը կավարտվի 2008 թ.: Այդ ժամանակ ջերմաէլեկտրակայանի արտադրած էլեկտրաէներգիան կկազմի ներկայիս գործող հզորության մեկ վեցերորդը: Սակայն նկատի ունենալով, որ գործող հզորությունը կածի, նախարարի կարծիքով, այդ թիվն այլ կլինի: Այն հարցին, թե, ի վերջո, նոր ջերմակայա՞ն է կառուցվում, թե՞ հին է վերակառուցվում, Արմեն Մովսիսյանը պատասխանեց, որ Երեւանի ՋԷԿ-ի բազայի վրա կառուցվում է նոր էներգաբլոկ, որի շահագործման ժամանակ կօգտագործվեն ՋԷԿ-ի ենթակառուցվածքները:

PHOTOLURE

Ճաղոնիայի միջազգային համագործակցության բանկի Եվրոպայի եւ Միջին Արեւելքի երկրների տեղական գործադիր տնօրեն **Կունիակի Իսուն** նույնպես գոհունակություն հայտնեց հայկական կողմի հետ համագործակցությունից, նշելով, որ սա ճաղոնական երկրորդ խոշոր վարկային ծրագիրն էր Հայաստանի էլեկտրացանցերի վերակառուցման համար տրված վարկից հետո: Ճաղոնացի հյուրը նաեւ հույս հայտնեց, որ հայ-ճաղոնական հարաբերությունները կզարգանան այլ ոլորտներում եւս եւ իր ելույթն ավարտեց հայերեն «շնորհակալություն» հայտնելով:

Էներգետիկայի նախարարը այս նախագծի վերաբերյալ ճաղոնական կողմի շահագրգռվածության վերաբերյալ հարցին պատասխանեց, որ Ճաղոնիան որպես զարգացած երկիր օգնում է զարգացող երկրներին եւ այդ պատճառով էլ նման արտոնյալ վարկ է տրամադրել: Նախկինում նման վարկ չէր տրամադրվում, քանի որ մեր երկիրը պետք է ապահովեր որոշակի չափանիշներ: Մասնավորապես, Արմեն Մովսիսյանն ընդգծեց, որ ճաղոնական կողմի պահանջով Երեւանի ՋԷԿ-ը հանվել է սեփականաշնորհման ցանկից: Նա մեկ անգամ եւս անդրադարձավ նոր էներգաբլոկի կառուցման դեպքում ատոմակայանը փակելու ճնշումների ուժեղացմանը, քանի որ ջերմակայանը չի կարող ԱԷԿ-ին փոխարինող հզորություն հանդիսանալ: Արմեն Մովսիսյանը նշեց, որ որպես հավանական եւ մրցունակ սցենար Հայաստանի կառավարության կողմից դիտարկվում է գործող ատոմակայանի փակման պարագայում նոր ատոմակայանի կառուցումը:

Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի վերակառուցման վերաբերյալ հարցին ի պատասխան նախարարը տեղեկացրեց, որ ռուսական «Գազպրոմն» ու «ՌԱՕ ԵԷՍ»-ը օրեր առաջ այդպիսի առաջարկ են ներկայացրել, որը դեռեւս չի ուսումնասիրվել: Ինչ վերաբերում է «Հայաստանի էլեկտրացանցերը» վաճառելու հնարավորությանը, ապա չնայած ռուսական մամուլում ժամանակ առ ժամանակ հրապարակվող տեղեկություններին դրանց հնարավոր վաճառքի մասին, Արմեն Մովսիսյանը հայտնեց, որ Հայաստանի կառավարությանը դեռ ոչ ոք չի դիմել էլցանցերը վաճառելու կամ գնելու առաջարկով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ՏԵՍՈՒԼԵՐ

Հրազենային անզգույշ կրակոց

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տրամադրած օպերատիվ տեղեկագրից տեղեկացանք, որ մարտի 28-ին ոստիկանության Կոտայքի բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ որովայնի մասում ստացած հրազենային վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել Էրիկ Ա.-ն: Մեկնած օպերատիվ խմբին վերջինիս հայրը հայտնել է, որ որդին վնասվածքը ստացել է զենքը մաքրելիս անփույթ վարվելու հետեւանքով արձակված կրակոցից, եւ ներկայացրել «ԻԺ-18» տիպի 16 տրամաչափի որսորդական հրացանը: Դեպքի հանգամանքները պարզվում են, քննությունը վարում է դատախազությունը:

Հարբած ամուսինը ծեծեց կնոջը

Մարտի 29-ին ոստիկանության Մաշտոցի բաժին է դիմել Սիլվա Կ.-ն եւ հայտնել, որ նախորդ օրը ամուսինը՝ 1955 թ. ծնված Ռազմիկ Ֆ.-ն, գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, վիճաբանության ժամանակ ծեծի է ենթարկել իրեն եւ պատճառել մարմնական վնասվածք: Ռազմիկ Ֆ.-ն բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, կատարվում է հետաքննություն:

Մ. ՄԱՐԿԱՐՅԱՆ

Կրթական խողան՝ տխուր վիճակագրությամբ

Այսօր հանրապետությունում գործում են 200-ից ավելի երաժշտական եւ արվեստի դպրոցներ՝ 4364 ուսուցիչով, 25 հազար աշակերտությամբ: Ըստ ԱԺ սոցիալական եւ առողջապահության հարցերի հանձնաժողովի նախագահ **Գագիկ Մխեյանի**, այս տարի այդ հաստատություններում ուսուցիչների թիվը նվազել է 41, աշակերտներինը՝ 27 տոկոսով:

Որ այս ոլորտը դուրս է մնացել կրթական ընդհանուր խաղաղությունից, ակնհայտ իրողություն է: 1991 թվականից այստեղ մասնագետների որակավորման ու վերապատրաստման դասընթացներ չեն անցկացվել, եւ այդպիսիք չեն նախատեսվում նաեւ կրթական բարեփոխումների նոր ծրագրում: Այս ասպարեզում չեն գործում պետական չափորոշիչները, չկան ուսումնական պլաններ ու մասնագիտական առարկաների ցանկեր: Կանոնակարգված չեն նաեւ ուսման վարձավճարների չափերը, որից օգտվելով շատ տեղերում վարձավճարների կամայական բարձրացումներ են լինում՝ դուրս մղելով օժտված, բայց անապահով երեխաներին:

Եվ քանի որ այս կրթարանները համայնքների ենթակայության տակ են, վերջիններս, անկախ իրենց դոտացիաների չափից ու բյուջեից, հապաղում են բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը նույնիսկ նվազագույն մակարդակով: Գյուղական շատ բնակավայրերում այս ուսուցիչներն ստանում են 5-6 հազար դրամ:

Այս ամենից զատ երաժշտական ու արվեստի դպրոցների մեծամասնությունը հատկապես աղետի գոտում ու սահմանամերձ շրջաններում շենքային պայմաններ չունի, շատերը վթարային վիճակում են, շատերը չունեն գույքային բազա հատկապես ժողովրդական գործիքների առումով:

Հավանաբար կրթական ընդհանուր խաղաղությունից դուրս մնացած այս խնդիրները պետք է կարգավորել օրենսդրական լուծումներով: Այս առթիվ «Կոնգրես» հյուրանոցում «Օե» խմբակցության եւ ԱԺ հանձնաժողովի նախաձեռնությամբ ապրիլի 1-ին հասարակական քննարկումներ կկայանան՝ ԱԺ պատգամավորների, կրթության նախարարության, երաժշտական ու մշակույթի դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ:

Կ. Դ.

90-ԱՄՅԱԿ

Շվեդահայերը՝ միացյալ ճակատով

Շվեդիայի հայկական միությունները համադրող կենտրոնը (ՇՀՄՀԿ), ըստ ստացված մամուլի հաղորդագրության, սերտորեն համագործակցում է Եվրոպահայերի համագումարի (ԵՀՀ) հետ: Ուպսալայում գումարված մարտի 12-ի տարեկան ընդհանուր ժողովում կենտրոնի ծավալած գործունեության եւ ֆինանսական ոլորտների հաշվետու զեկույցներից հետո քննարկվել եւ հաստատվել են կազմակերպության հետագա գործունեության, ձեռնահաս ուժերի համախմբման, կառույցի ժողովրդավարության ընդլայնման եւ տասնամյա կանոնադրությունը նոր պայմաններին հարմարեցնելու խնդիրները: Հատուկ քննարկման թեմա են դարձել Հայոց ցեղասպանության 90-ամյակի առթիվ նախատեսված միջոցառումները, որոնց թվում են ցուցահանդեսները, կոնֆերանսները եւ դասախոսությունները երկրի տարբեր քաղաքներում: Ապրիլի 23-ին եւ 24-ին ծրագրվել է Ստոկհոլմում անցկացնել համատեղ նիստ եւ ցույց, իսկ սեպտեմբերին՝ եվրոպական մակարդակով միջոցառումներ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու դեմ:

Տարեկան ժողովը վերահաստատել է իր անվերապահ աջակցությունը ԵՎՐՈՊԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ գործունեությունը ցեղասպանության ճանաչման, Հայաստանի պետականության ամրապնդման եւ Ղարաբաղի հակամարտության արդարացի լուծման վերաբերյալ:

Նորվեգահայերի ասոցիացիայի ներկայացուցիչը շնորհակալություն հայտնելով հրավերի համար, ընդգծել է եվրոպական բոլոր հայկական համայնքների համագործակցությունը զարգացնելու անհրաժեշտությունը:

Հ. Ծ.

«Քանի դեռ հայ ժողովուրդն ունի իր պահանջը շարունակելու կամք, կհասնի իր իրավունքներին»

1-ին էջից

Շեյխ ալ Ֆարեսը հիշեց իր մեծ հոր պատմածը, որ իրենց բնակության շրջանը վտանգավոր է եղել հայերի համար եւ նրանց կյանքն ապահով դարձնելու համար իր ցեղախմբի մարդկանց ուղեկցությամբ հայերին ուղարկել է Սնջար լեռան մոտ բնակվող մի եզդու մոտ, մինչեւ իրենց շրջանում դրությունը փոքր-ինչ կհանդարտվեր:

«Սիրիայում ապրող մեր հայ եղբայրները մեր կյանքի մի մասնիկն են, ձեռք ձեռքի տված մասնակցում են Սիրիայի հասարակական, տնտեսական եւ մյուս ոլորտների բարգավաճմանն ու զարգացմանը: Սկզբնական շրջանում հայերը ապրում էին գյուղական վայրերում, արաբների հետ վար ու ցանք անում, զբաղվում անասնապահությամբ, հագնում մեր ազգային տարազը, պահպանում մեր սովորությունները ու բարքերը: Նրանք իրենց կյանքն ապրեցին մեր կողքին, նույնացան մեզ հետ՝ ցույց տալով իրենց քաջությունը, հյուրասիրությունը, անկեղծությունը, իրենց նկարագրի բոլոր լավագույն գծերը: Ավելին, մեր ցեղախմբերի վեճերի, տարակարծությունների, անգամ ընդհարումների ժամանակ նրանք մասնակից էին դառնում՝ դրսեւորելով հայ ժողովրդի ամենագլխավոր հատկանիշը՝ խաղաղասիրությունը: Հայերի մեջ իրենք երբեք չար տրամադրություններ չեն նկատել», ասաց նա: Նա կատակով ավելացրեց, որ արաբների հետ անապատային կյանքով ապրող հայերը նույնիսկ սկսել են նրանց պես ձեռքով ուտել:

«Ազգի» հարցին, թե ի՞նչ կարծիք ունի Թուրքիայի ժխտողական քաղաքականության մասին, նա ասաց, որ այսօրվա Հայաստանի գոյության փաստը մեծագույն պատասխանն է թուրքերին, եւ Հայոց ցեղասպանության նրանց ճանաչումը այդքան էական չէ: «Իրավունքը միայն պահանջողինն է, քանի դեռ հայ ժողովուրդն ունի իր պահանջը շարունակելու կամքը, վստահ եմ, որ անպայման կհասնի իր իրավունքներին»:

Բագարա ցեղախմբի երկրորդ ծյուղի շեյխ Նաուաֆ ալ Բաշիրը պատմեց, որ արաբներն օժանդակել են հայերին նույնիսկ այն ժամանակ, երբ հրահանգված է եղել չօգնել նրանց, չենթարկվելու դեպքում սպառնացել են մահվան դատապարտել: Սակայն արաբներն առանց վախի իրենց տներում ապաստան են տվել գաղթական հայերին, նրանց վերաբերվելով որպես հարազատների:

«Հայոց ցեղասպանության իրողությունը հարցականի տակ դնողներին նրանք կամենում են ասել, որ իրենց հայրերը եղել են դրա անմիջական ականատեսները, հայերին փրկողները, որ նրանց տեսածն ու պատմածը իրականություն է, եւ այդ փաստն այստեղ ներկա է», ասաց Հալեպի առաջնորդարանի անդամ **Խաչիկ Մաջիկյանը:**

Աշիրեթպետների պատմելով, գերդաստանի ավագները սերունդներին ավանդել են իրենց կողքին միշտ տեղ տալ հայերին, նրանց ընդունել հարազատ զավակների պես: Ալ թայ ցեղախմբի երկրորդ ծյուղի աշիրեթպետ **Մուհամադ ալ Թահին** իր պապից լսել է, որ իրենց գերդաստանում ապաստան գտած հայերի մեջ եղել են նորածին որբուկներ, նրանց կրծքով կերակրել են արաբ կանայք: Մոտ 70 հայերի մի մասը 1946 թ. գաղթել է Հայաստան, մյուս մասը դարձել գերդաստանի անդամ, հարս կամ փեսա՝ արաբների հետ խառը ամուսնությունների հետեւանքով: Նա համոզված է, որ Թուրքիան պետք է ընդունի իր գործած ոճիրը, հատուցի նյութական, բարոյական, հողային վնասները եւ դրանով վերականգնի պատմական արդարությունը:

Պատվիրակության կազմում էր նաեւ Հալեպում Հայաստանի գլխավոր հյուպատոս **Արմեն Մելքոնյանը:** Նա նշեց, որ աշիրեթպետները, որոնցից 3-ը խորհրդարանի պատգամավորներ են, իրավունք ունեն արտահայտելու միայն իրենց անձնական տեսակետները, որովհետեւ Սիրիան Հայոց ցեղասպանության վերաբերյալ պաշտոնական տեսակետ դեռ չի արտահայտել: Նրանց այցը զուտ ճանաչողական է եւ որեւէ կապ չունի Սիրիայի արտաքին քաղաքականության հետ:

Հայտարարություն

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Արմեն Արաշեսի Ավետիսյանի նկատմամբ իրականացված մահափորձի կազմակերպիչների կամ մասնակիցների մասին արժեքավոր տեղեկություններ տրամադրող քաղաքացիներին կտրվի դրամական խոշոր պարգեւ:

Տեղեկատու անձանց գաղտնիությունը երաշխավորվում է:

Հեռախոսներ՝ 52-95-96 եւ 56-35-15

ԱԶԳ

Դիտարկումներ

Առաջիկա տարիներին Երեւանում սկսված կառուցապատման գործընթացը Կենտրոնից կտարածվի դեպի մյուս համայնքներ: Այդ գործընթացը կանոնակարգելու նպատակով Երեւանի քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչությունն արդեն մշակել է քաղաքի տարբեր հատվածների կառուցապատման նախագծերի մշակման ծրագիր, որի մանրամասների մասին տեղեկացնի մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանից:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է բացառել քաղաքաշինական խառնաափոթն ու անկանոն հողահատկացումները

Հավաստիացնում է Երեւանի գլխավոր ճարտարապետը

Նա ընդգծեց, որ այդ տարածքները դեռեւս չեն համարվում իրացման գոտիներ եւ վերցված չեն պետության կողմից, իսկ հիշյալ վարչության համար այդ փաստաթուղթն աշխատանքային է: Ծրագիրն, ըստ Սամվել Դանիելյանի, բխում է գլխավոր հատակագծից: Հարցին, թե ինչո՞ւ է այն գլխավոր հատակագծից ավելի վաղ ընդունվել, մեր զրուցակիցը պատասխանեց, որ գլխավոր հատակագծի հաստատումից հետո հաջորդ քայլերի կատարման անհրաժեշտություն է առաջանալու եւ այս ծրագրով այդ քայլերն արդեն հայտնի կլինեն:

Գլխավոր ճարտարապետի հավաստմամբ, ծրագրի հիմնական նպատակն է բացառել անկանոն, առանձին-առանձին փոքր հողահատկացումները, քաղաքաշինական խառնաափոթը, հողահատկացման յուրաքանչյուր մրցույթն իրականացնել կոնկրետ կառուցապատման ծրագրի շրջանակներում: Հայտնի կլինեն կառուցապատման չափորոշիչները՝ թե շինությունները փողոցներից ինչ հեռավորության վրա են լինելու, ինչ հարկայնություն ունենալու, ինչ խտությամբ կառուցվելու, ինչպես նաեւ այն, թե կոնկրետ որքա՞ն տարածք է դրվելու կառուցապատման եւ ի՞նչ պետք է այնտեղ կառուցապատվի:

«Յուրաքանչյուր լոտի համար նվազագույն տարածք սահմանվելո՞ւ է, եւ մեկնարկային գինը սահմանելիս շուկայական, թե կադաստրային գի՞նն է հիմք ընդունվելու» հարցերից առաջինին պատասխանելիս Սամվել Դանիելյանը նշեց, որ մեկ լոտի նվազագույն չափը պետք է լինի օպտիմալ՝ կախված նրա քաղաքաշինական դիրքից: Փոքր լոտերի դեպքում խնդիրներ են առաջանում, քանի որ տարբեր կառուցապատողներ ունենում են տարբեր շահեր եւ դրա հետ կապված բարդություններ են լինում: Իսկ երբ տվյալ տարածքը դրված է լինում մեկ լոտով, ապա այդ խնդիրներն ավելի հեշտ են լուծվում: Այսինքն, հնարավոր է լինում խուսափել սահմաններից դուրս կառուցապատումից եւ ավելորդ հարկայնությունից, քանի որ ավելի մեծ շահույթ ստանալու նպատակով բոլորը ձգտում են կառուցել ավելի մեծ մակերեսով եւ շատ հարկերով: Ինչ վերաբերում է հողի մեկնարկային գնին, ապա դա նույնպես կորոշվի ըստ կոնկրետ տարածքի: Կուսումնասիրվի տվյալ տարածքի շուկայական գինը, հաշվի կառնվի, թե ինչպիսին է դիրքը՝ փողոցի վրա է, թե՞ ավելի ներս ընկած:

Սամվել Դանիելյանի կարծիքով, ձեռնտու է նաեւ կառուցապատման աշխատանքներ իրականացնողների շուկան: Եթե նախկինում մեծ հակում կար շինարարական կազմակերպությունների կողմից այդ ոլորտում ընդգրկվելու, ապա այժմ շատերը հրաժարվում են դրանից: Ստեղծվել են լուրջ ընկերություններ, որոնք կարող են նման ծրագրեր իրականացնել: Արտերկրից էլ նման ցանկություն ունեցողներ կան: Օրինակ՝ Հյուսիսային պողոտայում շինարարություն է իրականացնում ռուսական մի ընկերություն: Ցանկացողներ, ըստ գլխավոր ճարտարապետի, շատ կան, բայց բոլորը չէ, որ կցանկանան բազմաթիվ ընտանիքների հետ պայմանագրեր կնքել, հնարավոր դատական վեճերի մեջ ընկնել: Այդ պատճառով էլ նրանք սկսել են լրջորեն մտածել, մինչ կառուցապատման ծրագրի մեջ ընդգրկվելու ցանկություն հայտնելը:

Մայրաքաղաքի համայնքներում կառուցապատման համար նախատեսված տարածքներից Սամվել Դանիելյանը հիշատակեց քաղաք մտնող փողոցները եւ դրանց հարակից տարածքները: Մալաթիա-Սեբաստիա համայնքում Դալմայի այգիներին հարակից տարածքը, Աջափնյակում՝ 16-րդ թաղամասը եւ այլն: Սակայն քանի որ ծրագիրը դեռեւս աշխատանքային է, գլխավոր ճարտարապետը զերծ մնաց բոլոր տարածքների եւ դրանցում նախատեսված կառույցների վերաբերյալ մանրամասներ հայտնելուց:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐՔԱԿ

Նկատվում է ծնելիության մակարդակի կայունացում

Շիրակի մարզպետարանի վերջին երկու տարիների տվյալներով մարզում նկատվում է ծնելիության եւ բնակչության բնական աճի մակարդակի կայունացում: 2003 եւ 2004 թվականներին ծնելիության ցուցանիշն այստեղ 1000 մարդու հաշվով կազմել է 11,7, բնական աճինը՝ համապատասխանաբար 3,6 եւ 3,2: Դրանք վերջին հինգ տարիներին ամենաբարձրն են, թեեւ առավել բարձր է նաեւ մահացության միջին ցուցանիշը:

Մարզի ժողովրդագրական տվյալների փոփոխությունների վերլուծությունը մի օրինաչափություն է երեւան հանում: Ասենք՝ ծնունդների թվի մի քանի տարիների շարունակական նվազումն ի վերջո հասցնում է մի մակարդակի, երբ երեւի նվազում այլեւս հնարավոր չէ եւ սկսվում է հակառակ գործընթացը: 2000-2004 թթ. մարզում այդպիսի անկման սահմանագիծ է եղել 2002 թվականը, երբ ծնունդների թիվը 1997 թվականի 4613-ից ամեն տարի պակասելով՝ իջել է մինչեւ 2804, իսկ մահերի թիվը, դրան հակառակ, հասել այս տարիների ամենաբարձր նիշին՝ 2532-ի: Բնական աճի միջին ցուցանիշը յուրաքանչյուր հազար մարդու հաշվով 1 մարդուց պակաս է եղել (0,7)՝ 2000 թվականի համեմատությամբ նվազելով երեք, 1999 թվականի համեմատությամբ՝ ավելի քան չորս անգամ... Անկման ահա այս աստիճանին հաջորդում է վերջին երկու տարիների որոշակի աճը: 2003 թվականին մարզում ծնվել է 3360, անցյալ տարի՝ 3336 մարդ: Մահացողների թիվը կազմել է համապատասխանաբար 2316 եւ 2405 մարդ:

Ծնելիության եւ բնական աճի ցուցանիշների երկամյա կայունացմամբ հանդերձ մարզում հաստատուն աճում է նաեւ մահացության միջին ցուցանիշը, որը 2000 թվականի 6,4-ից 2003 թվականին հասել է 8,1-ի, 2004-ին՝ 8,5-ի: Սա նաեւ մարզի բնակչության «ծերացման» արտահայտություն կարող է համարվել: Ըստ պատճառական գնահատումների՝ մահացության պատճառների մեջ գերակշռում են սիրտ-անոթային հիվանդությունները, իսկ մահերի 75 տոկոսը բաժին է ընկնում 60 եւ ավելի տարիքի մարդկանց: Լուրջ հիմնախնդիր է մնում այնպիսի սոցիալական հիվանդությունների աճը, ինչպիսիք են տուբերկուլյոզը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, ալկոհոլիզմը եւ թմրամոլությունը: Անցյալ տարվա դեկտեմբեր ամսվա տվյալներով մարզում պատշաճաբար գրանցված են ՁԻԱՀ-ով 6 հիվանդներ եւ 5 ՄԻԱՎ վարակակիրներ, 55 թմրամոլներ, խրոնիկ ալկոհոլիզմով տառապող 568 անձինք:

Գ. Մ.

Սնունդ՝ մարզպետի այգիները հիմնելու դիմաց

Վայոց ձորի մարզի Գոմք գյուղի ներկայիս բնակիչները՝ 40-50 ընտանիք, Ադրբեջանի Շահումյանի շրջանից բռնագաղթած փախստականներ են: 1991 թ. սեփականաշնորհման ընթացքում մի քանի փախստական ընտանիքների գյուղամերձ «Ախտա» կոչվող հանդամասից հողամասեր են հատկացվել: 2002 թ. գյուղացիները Վայոց ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկյանի նախաձեռնությամբ այդ հողատարածքում դեղձի ու ծիրանի այգիներ են հիմնել: Մարզպետը նրանց հորդորել է մասնակցել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրին ու ծառատունկ կատարել, որի դիմաց ալյուր ու ձեթ էին ստանում: Անտեղյակ գյուղացիները չէին էլ կարող պատկերացնել, որ իրենց սեփական հողամասում, իրենց համար իրականացվող «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով այգի են հիմնում մարզպետի համար:

Փախստականներից Նունե Սաֆունցը պատմեց, որ գյուղացիները գրեթե ողջ հանդամասում ծառատունկ էին կատարում, բացի իր եւ Դիանա Ավետիսյանին պատկանող հողամասերից: «Հաջորդ տարին արդեն մեր հողամասում էլ տնկեցին: Նրանք տնկեցին, մենք հանեցինք, դեն նետեցինք»: «Մարզպետ Պ. Մանուկյանը մեզ խնդրում էր, որ չընդդիմանանք, ասաց, թե սա ծրագրային աշխատանք է՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով, եթե հողը ձերն է, ծառի բերքը դուք կհավաքեք: Մտածեցինք, որ եթե ծրագիրը բոլորի համար է, թող մեզ համար էլ տնկեն», ավելացրեց Գոմք գյուղի բնակիչ Դիանա Ավետիսյանը:

2003 թ. փախստականները դիմել են կադաստր՝ սեփականության իրավունքի նոր վկայականներ ստանալու: Նրանց պատասխանել են, թե բոլոր հողակտորներինը միասին կտան: «Բոլոր հողակտորների սեփականության իրավունքի վկայականները հանձնեցին, բացի միակ ջրովի հողակտորից՝ «Ախտա» հանդամասի 3000 քմ տարածքից, եւ ասացին, որ գյուղապետարանն արդեն վաճառել է հողատարածքը», պատմեց Նունե Սաֆունցը:

Սեփականաշնորհումից 10 տարի անց «Ախտա» կոչվող 20 հա հողատարածքը Գոմքի ավագանու 11.09.00 թ. թիվ 1 որոշմամբ տրամադրվել է վարձակալության եւ ավագանու 08.12.02 թ. թիվ 1 որոշման հիման վրա ներկայացվել է աճուրդով օտարման: Աճուրդում շահել է «Վայոց ձոր» ՍՊԸ-ն, որի նախագահը Վայոց ձորի նախկին մարզպետ Պ. Մանուկյանն է:

2003 թ. վերջին կադաստրային քարտեզագրումն ավարտելուց հետո պարզ է դարձել, որ այդ տարածքում կան նաեւ սեփականաշնորհված հողեր, այդ թվում նաեւ Նունե Սաֆունցին ու Դիանա Ավետիսյանին պատկանող հողամասերը: Նշված հողամասերը, համաձայն համայնքի կադաստրային քարտեզի, գտնվում են 313-2, 314-2 եւ 314-5 համարների տակ: Այսինքն, մարզպետը նախապես սեփականացրել էր փախստականների հողամասերը, որից հետո, օգտվելով «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի ընձեռած հնարավորությունից, նրանց միջոցով պտղատու այգիներ էր հիմնում իր համար:

Պանդուխտ Մանուկյանը 2003 թ. հունիս ամսին ազատվել է աշխատանքից, սեփականատերերը բողոքով դիմել են Վայոց ձորի ներկայիս մարզպետ Սամվել Սարգսյանին, որը փորձել է վեճը լուծել հաշտությամբ: Սեփականատերերից չորսը համաձայնել են փոխհատուցման առաջարկին եւ վերցրել են առաջարկված գումարը, իսկ մեկին խոստացված փոխհատուցումը՝ գումար կամ այլ հողակտոր, չեն տվել: Էռնեստ Սաֆունցի եւ Կառլեն Ավետիսյանի ընտանիքները (Ն. Սաֆունցի ու Դ. Ավետիսյանի հայրերն են) հրաժարվել են փոխհատուցումից եւ դիմել են Վայոց ձորի մարզի առաջին ատյանի դատարան՝ խնդրելով իրենց հողատարածքներն ազատել ապօրինի տիրապետողից՝ պատասխանող ճանաչելով Գոմք համայնքի ղեկավարին, «Վայոց ձոր» ՍՊԸ-ին, «Վայքի» տարածքային կադաստրին: Արդեն նախկին մարզպետը հայտնել է, որ ոչ մի ծրագիր էլ չի եղել, սեփական միջոցներով է իրականացրել ծառատունկը եւ հակընդդեմ հայցով գյուղապետարանից պահանջել է փոխհատուցել իր կրած վնասները: Դատարանը հայցն ու հակընդդեմ հայցը բավարարել է, վճիռն օրինական ուժի մեջ է մտել եւ կատարողական թերթի հիման վրա փախստականները ստացել են իրենց հողակտորների սեփականության իրավունքի վկայականները:

Գոմքի գյուղապետը, որը չէր ներկայացել դատարան, 2 օր ուշացումով վերաքննիչ բողոք է ներկայացրել, եւ դատարանն այն ընդունել է առանց բաց թողած ժամկետը վերականգնելու: Գյուղապետարանը վերաքննիչ դատարանում բողոքարկել է «Վայոց ձոր» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցը, որով պահանջել էր գյուղապետարանից փոխհատուցել ծառատունկի ծախսերը: Կողմերը չեն ներկայացել դատարան, եւ երկու անգամ նիստերը հետաձգելուց հետո վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել հայցն ու հակընդդեմ հայցը թողնել առանց քննության:

Այս անգամ «Վայոց ձոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել ՀՀ քաղ. գործերով վերաքննիչ դատարան՝ հայտնելով, որ Վայոց ձորի մարզի 1-ին ատյանի դատարանի հունիսի 11-ին կայացված եւ բողոքարկված վճիռը հայցվորներ Էռնեստ Սաֆունցն ու Կառլեն Ավետիսյանը ներկայացրել են կատարման, եւ կադաստրը գրանցել է նրանց սեփականության իրավունքը: «Վայոց ձոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը խնդրել է կասեցնել վճռի կատարման շրջադարձ, այսինքն՝ անվավեր ճանաչել փախստականների սեփականության իրավունքը, քանի որ վերաքննիչ դատարանի որոշմամբ վերը նշված քաղ. գործը թողնվել է առանց քննության: Սեպտեմբերի 27-ին դատարանը (նախագահող դատավոր Ա. Խառատյան, Տ. Սահակյան, Վ. Ավանեսյան), որոշում է կայացնում 11.06.04 թ.-ին վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ:

Փախստականներն այդ մասին չեն ծանուցվել, եւ վճիռն օրինական ուժ է ստացել: Իրենց սեփականության իրավունքի վկայականներն անվավեր ճանաչելու մասին փախստականները տեղեկացել են «Վայոց ձոր» ՍՊԸ-ի ներկայացուցչից: «Այդ ընթացքում մենք վարում էինք հողը, իսկ նրանք մեզ չհարցրին, թե ինչու ենք վարում», պատմեցին Նունե Սաֆունցն ու Դիանա Ավետիսյանը:

Երկու ընտանիքները պատրաստակամ են ամեն գնով պաշտպանելու իրենց սեփականությունը եւ զիջման ոչ մի մտադրություն չունեն: «Անցնող ծանր տարիներին այդ հողամասը նեցուկ է եղել մեզ համար՝ ցորեն ենք ցանել ու լավ բերք ստացել, այնտեղ մինչեւ 35 տարեկան ընկույզի ծառեր կան, որոնցից մեծ եկամուտ ենք ստանում», ասաց Դիանա Ավետիսյանը:

ՍԵՌՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

www.hetq.am

Պուտինի Երեւան այցի մոսկովյան արձագանքներ

Վլադիմիր Պուտինի երեւանյան այցի վերաբերյալ ռուսական մամուլում բացահայտ շատ նյութեր չկատեցի, ինչն, անկեղծ ասած, ինձ խիստ զարմացրեց. ռուս-հայկական բարվոք հարաբերությունները Ռուսաստանում բոլորի սրտով չեն: Եթե նույնիսկ հանդիպում էին խայթիչ մոտիվներ, ապա դրանք վերաբերում էին երկու երկրներին հավասարապես: Այդ նյութերի վերնագրերն արդեն այցի ենթատեքստերի պերճախոս վկայությունն էին: «Պուտինն այցելեց Ռուսաստանի վերջին հենակետն ԱՊՀ-ում», «Պուտինը Հայաստանում կփորձի իր կողմը պահել վերջին դաշնակցին»: Իսկ թերթերից մեկն էլ այցելությունը համարել էր... «Երեւանյան գամբիտ»: Հրատապ է:

Խորհրդանիշ ռուսաստանյան մամուլը հիրավի հստակ կռահել էր իր նախագահի բազմիմաստ «հյուրախաղի» գլխավոր նպատակը: «Արձանագրային պերճաբում միջոցառումները, գրում է «Կոմերսանտը», որոնց կմասնակցեն երկու երկրների նախագահները, ողող են ծածկելու երկխոսության լարվածությունը: Մտահոգված ԱՊՀ-ում տեղի ունեցող գոյնզգույն հեղափոխություններից, Ռուսաստանը վախենում է կորցնել հետխորհրդային տարածքի իր գրեթե վերջին հուսալի հենարանը»: Թերթը հստակ ուշադրություն է հասկացրել այն հանգամանքին, որ Ռուսաստանը հուսով է Վրաստանի ռազմակայաններից իր զորքն ու սպառազինությունը տեղափոխել Հայաստան: Ընդսմին նշվում է, որ Երեւանը, համաձայնելով այդ մտադրությանը, առաջարկում է մի ամբողջ շարք պայմաններ:

«Ռոսիյսկայա գազետան» փնտրելով պատճառական թերթ, բարացակամ շարունակելով նախադրյալներն ու փաստերը, ընդհանրացնում է. «Հայաստանում այսօր բացվող Ռուսաստանի տարվա համար պատրաստված է խաղաթղթերի տեսքն»:

«Իզվեստիան» արձանագրելով, որ Հայաստանը համարվում է Ռուսաստանի ամենահուսալի գործընկերներից մեկը, փորձում է պարզաբանել, թե ինչու. «... որովհետեւ մյուս հարեւանների՝ տարածաշրջանում ԱՄՆ-ի խաղաթղթերի հենակետեր համարվող Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունները պատմականորեն խիստ բարդացած են: Հնարավոր է, որ Երեւանի վարած խաղաթղթերը փոխվի, բայց բավական հեռավոր հեռանկարում»:

Ինչպես միշտ, իր կիսաբուլվարային ոճին հարազատ է «Մոսկովսկի կոմերսանտը»: Պուտինը խիստ ժողովրդական է Հայաստանում, նշում է թերթը, միաժամանակ առիթը բաց չթողնելով սրամտելու. «Թերեւս ավելի, քան Քոչարյանն ինքը»: Հոդվածագիր Ալեքսանդր Բոտբերգն իրեն հատուկ հակահայկական «խորաթափանցությամբ», այնուամենայնիվ, երեւի չէր կարող թույլ չկաթեցնել. «Ռուսաստանի հետ դաշինքը շատ բան է նշանակում հանրապետության համար: Երեւանում առանց քաշվելու ասում են, որ երկիրն էապես ապրում է այն փողերով, որ ողջ աշխարհի հայերն են ուղարկում իրենց հայրենիք: Բայց առնվազն երկրի կեսը տեղափոխվել է Ռուսաստան»:

Հետաքրքրական է, որ Հայաստանի նկատմամբ առանձնակի համակրանքով աչքի չընկնող «Նեզավիսիմայա գազետան» այս անգամ բավական չափավոր էր իր «անկախ» մոտեցման մեջ: «Մոսկովյան պատվիրակության այցը փաստորեն կոչված էր ակնբախորեն ցուցադրելու, որ նախկին խորհրդային հանրապետությունների մեջ կան նաեւ այնպիսիք, որոնք առայժմ չեն հայտնվել Արեւմուտքի ազդեցության տակ»:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ուկրաինայի վարչապետուհի Յուլյա Տիմոշենկոն կիսով հայազգի՞

Ուկրաինայի ներկա կառավարության նախագահը՝ Յուլյա Տիմոշենկոն, խառնվածքով ակտիվ ու խիստ ընդգծված նկարագրով գեղեցկուհին, այդ «ենթուր ժամանակ, շնաձկան գործելակերպով երկաթյա լեդին», համարձակ պահվածքով աչքի է ընկել դեռեւս դպրոցական տարիներից: Ինքնուրույն դասարանում ուկրաինական մի դպրոցից մեկ այլ դպրոց տեղափոխվելիս՝ նախկին ուսուցչուհու բնութագիրն այսպիսին է եղել. «Աչքի է ընկնում անպատկառ վարքով»:

Ուկրաինական «նարնջագույն հեղափոխության» գլխավոր դերակատարուհին, պարզվում է, հայկական ծագում ունի: Այդ մասին տեղեկացնում է Պրահայում լույս տեսնող «Orbi» ամսագրի՝ ըստ «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի մի հրապարակման Արծվի Բախչինյանի պատրաստած հոդվածը: Յուլյան հայրական Գրիգյան ազգանունը փոխել է Դնեպրոպետրովսկի համալսարանի տնտեսագիտական բաժնում սովորելիս եւ վերցրել մայրական Տելեգինա ազգանունը: Հայրը թողել է ընտանիքը, երբ Յուլյան դեռ փոքր աղջնակ էր:

Սկզբնական շրջանում Յուլյա Տիմոշենկոն զբաղվել է տեսասրահային բիզնեսով, վարձու տեսաժապավենների գործով: 1990-ականների սկզբին զբաղվել է նավթամթերի առեւտրով: Դնեպրոպետրովսկյան խոշոր արդյունաբերողների համար Յուլյայի նման կնոջ հայտնությունն իրենց միջավայրում անակնկալ էր: Ուկրաինայի նախկին նախագահ Կուչմայի փեսան Յուլյայի հետ զբաղվել է ռուսական եւ թուրքմենական գազի ներմուծմամբ: Յուլյայի հիմնած «Ուկրաինայի միասնական էներգետիկ համակարգ» կորպորացիան դարձել է ռուսական գազի խոշորագույն ներմուծողը՝ տարեկան 10 միլիարդ դոլարի շրջանառությամբ: Իր կարիերայի ընթացքում նա բարձրաստիճան պատասխանատու հանդիպումներում եւ հարաբերություններում հաճախ է ցնցող տպավորություն թողել: Ակտիվ դերակատարումներ է ունեցել նախագահ Կուչմայի դեմ ընդդիմադիր ուժերի կազմակերպման գործում: 2001 թ. Յուշչենկոյի հետ փորձել է գահընկեց անել Կուչմային: Ձախողումից հետո նրա դեմ տնտեսական հանցագործության համար քրեական գործ է հարուցվել, եւ Յուլյան 42 օր նստել է Լուկյանովսկի բանտում: 2004 թ. ամռանը նախկին խաղաթղթերի համաձայնությունը՝ Յուշչենկոյի նախագահ դառնալուց հետո Յուլյային վարչապետի պաշտոն տալը, իրականացավ «Նարնջագույն հեղափոխությունից» հետո:

Մ. Ռ.

Անսպասելի շրջադարձ Մայքլ Ջեքսոնի դատավարությունում

«Պոպ երաժշտության արքա» Մայքլ Ջեքսոնի դատավարությունն անսպասելի ընթացք է ստացել: Դատավոր Ռոնդի Մելվիլը որոշել է անչափահասի նկատմամբ Ջեքսոնի կատարած անվայել արարքների գործին կցել ավելի վաղ շրջանի նյութեր: Դրանք վկայում են, որ ամբաստանյալն անցյալում եւս համանման արարքների է դիմել առնվազն 5 անչափահասների նկատմամբ: Նրանց մեջ են հայտնի կինոդերասան Մաքոլի Կալկինը եւ երկու ուրիշ տղաներ, որոնց ընտանիքները միլիոններ են ստացել գործերի արտադատարանային կարգավորման շրջանակներում:

Դատախազ Թոմաս Սնեդոնը Ասոշիեյթեդ պրես գործակալությանը հայտնել է, որ հիշյալ դեպքերը տեղի են ունեցել 12-15 տարի առաջ: Հինգ տղաներից մեկը համաձայնել է հանդես գալ դատարանում: Երկու այլ դեպքերում ցուցմունքներ կտան դեռահասների մայրերը:

Ամերիկյան դատական համակարգում սովորաբար գործին չեն կցվում ամբաստանյալի անցյալին վերաբերող այնպիսի փաստեր, որոնք կարող են վնասել նրան: Բայց Կալիֆորնիայում 1996 թ. ընդունված օրենքը թույլ է տալիս օգտագործել նման փաստեր, եթե խոսքն անչափահասների պղծման կամ ընտանեկան բռնությունների մասին է:

Սումատրայի երկրաշարժը խուճապ է առաջացրել ոչ միայն տարածաշրջանում

Երկուշաբթի ուշ երեկոյան հերթական սաստիկ երկրաշարժը տեղի ունեցավ Ինդոնեզական Սումատրա կղզու մոտ: «Ազգը» երեկ տեղեկացրեց (առաջինը հայաստանյան մամուլում), որ Հնդկական օվկիանոսի առափնյա շրջանների բնակիչները տագնապահար սպասում են նոր ավերիչ ցունամիի: 2004 թ. դեկտեմբերի 26-ին դարձյալ Սումատրայից արեւմուտք տեղի ունեցած գրեթե 9 բալանոց երկրաշարժը եւ դրան հաջորդած ցունամին 290 հազար զոհ էին պատճառել:

Այս անգամ երկրաշարժի ուժգնությունը կազմեց, ըստ Ռիխտերի սանդղակի, 8,7 բալ: Օվկիանոսում տեղի ունեցած երկրաշարժի էպիկենտրոնն ընկած է Սումատրայից 200 կմ արեւմուտք եւ ընդամենը 90 կմ է հեռու Ինդոնեզական Նիաս փոքր կղզուց:

Հենց այդ կղզին է առավել շատ տուժել երկրաշարժից: Նիասի բնակելի տների 70 տոկոսն ավերված է: Կղզու գլխավոր քաղաք Գունունգ Սիտոլիում ավերված է շենքերի 80 տոկոսը: Տեղական իշխանությունների ներկայացուցիչը ՁԼՄ-ներին հայտնել է, որ կղզու 27 հազար բնակիչներից 10 հազարը մնացել է անօթեւան: Նիասի, Սումատրայի եւ տարածաշրջանի մյուս կղզիների բնակիչները գիշերն անցկացրել են դրսում՝ վախենալով նոր ցնցումներից եւ ալեկոծությունից: Վերջին տվյալների համաձայն, Նիասում զոհերի թիվը հասնում է 2000-ի:

Ինչ վերաբերում է ցունամիի վտանգին, այս անգամ ուժգին ալեկոծություն է եղել միայն Նիասից հյուսիս ընկած Սիմելուե կղզու մոտ եւ Կոկոսյան կղզիների շրջանում: Սիմելուե կղզու ափերի մոտ ալիքների բարձրությունը հասել է 3 մետրի: Նավահանգիստը մասամբ ավերված է:

Երկրաշարժից առդեն մի ժամ հետո Թաիլանդի, Ինդոնեզիայի, Շրի Լանկայի, Հնդկաստանի սեյսմոլոգները, ինչպես նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Յան Էգելանդը հայտարարեցին, որ այս անգամ ցունամիի վտանգը չնչին է:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Ինդոնեզիայի նախագահ Սուսիլո Բամբանգ Յուդհոյոնոն արտակարգ իրավիճակի կապակցությամբ հետաձգել է Ավստրալիա կատարելիք այցը եւ երեկ մեկնել է աղետյալ շրջաններ:

Երկրաշարժից հետո խուճապ է տիրում եվրոպական եւ ասիական ֆոնդային սակարաններում: Երեկ Լոնդոնում բաժնետոմսերի համախառն արժեքը նվազել է 0,54 տոկոսով, Ֆրանկֆուրտում՝ 0,66, Փարիզում՝ 0,78 տոկոսով: Առավել անկայուն վիճակ է Ասիայում: Տոկիոյում բաժնետոմսերն էժանացել են 1,63, Սեուլում՝ 1,75, Հոնկոնգում՝ 1,4 տոկոսով:

Միաժամանակ դոլարի փոխարժեքը ճապոնական իենի նկատմամբ հասել է վերջին 5 ամսվա ընթացքում ամենաբարձր ցուցանիշներին:

ԱՄՆ-ում պատրաստում են միջամտության ենթակա երկրների գաղտնի ցանկ

ԱՄՆ անվտանգության ծառայությունները պատրաստում են գաղտնի ցանկ այն 25 երկրների վերաբերյալ, որոնց անկայուն իրադրությունը կարող է հանգեցնել ամերիկացիների միջամտությանը: Տվյալ տեղեկությունը հրապարակում է «Ֆայնենշլ թայմս» թերթը, վկայակոչելով ԱՄՆ պետդեպարտամենտի վերակառուցման եւ կայունացման բաժանմունքի ղեկավար Կառլոս Պասկուալի խոսքերը:

Պաշտոնյան ասել է, որ Արտաքին հետախուզության ազգային խորհուրդը կկազմի եւ կնորացնի այդ ցանկը: Դրանում կընդգրկվեն «առավել մեծ անկայունության ու ռիսկի» երկրները, որպեսզի ամերիկացիները կարողանան սահմանել իրենց միջազգային գործունեության հնարավոր գերակայությունները եւ ըստ այդմ տնօրինեն ռեսուրսները:

Պասկուալին ընդգծել է, որ հակամարտությունների կանխումը եւ ռազմական գործողություններից ոչնչացած պետական կառույցների վերականգնումն ԱՄՆ-ի գլխավոր արտաքին քաղաքական խնդիրներից են, քանզի առկա է ահաբեկչության եւ զանգվածային բնաջնջման զենքի տարածման վտանգ:

Միաժամանակ պաշտոնական անձինք հայտարարում են, որ ԱՄՆ-ը ռազմական միջամտությունը բնավ չի համարում ներքին հակամարտությունների դադարեցման եւ անկայուն երկրների պետական կառույցների վերականգնման միակ միջոց:

Պետդեպարտամենտում վերակառուցման եւ կայունացման բաժանմունքը ստեղծվել է վերջերս եւ ունի համեմատաբար փոքր բյուջե. Կոնգրեսն այս տարի հատկացնելու է 17 մլն, եկող տարի՝ 124 մլն դոլար:

Իրաքում ռումինացի լրագրողներ են առեւանգվել

Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուի հայտարարության համաձայն, Իրաքում երկուշաբթի օրն առեւանգվել են ռումինացի 3 լրագրողներ: «Այդ կապակցությամբ մենք ծանուցումներ ենք ուղարկել բոլոր գաղտնի ծառայություններին եւ մեր դաշնակիցների օտարերկրյա հատուկ ծառայություններին», ընդգծել է նախագահը:

Նրա խոսքերով, առեւանգված լրագրողներից երկուսը ռումինական «Պրիմա» հեռուստաընկերության աշխատակիցներ են, իսկ երրորդը «Լիբերա» թերթի թղթակիցն է: Ոյթեր գործակալության տվյալներով, երեք լրագրողներին պատանդ են վերցրել Բաղդադի ճանապարհին. նրանք մտադրվել էին ռեպորտաժ պատրաստել Իրաքի մայրաքաղաքում:

Հեռուստալրագրողներն իրենք են զանգահարել «Պրիմա» հեռուստաընկերության գրասենյակ եւ հայտնել, որ իրենց պատանդ են վերցրել: Իրաքցի գրոհայիններն առայժմ որեւէ պայման չեն առաջադրել լրագրողներին ազատ արձակելու համար:

Ռումինիան հակաիրաքյան կոալիցիայի գծով ԱՄՆ-ի դաշնակիցն է: Իրաքում տեղաբաշխված օկուպացիոն ուժերի կազմում ծառայում են 800 ռումին զինվորներ:

Պ. Ք.

«Արտավազդ» մրցանակներ բեմարվեստի նվիրյալներին

Մշակութային եւ թատերական էլիտան երեկ հավաքվել էր «Արարատի» օղու, կոնյակի, գինու կոմբինատում: Ցերեկույթի առիթը Հայաստանի թատերական գործիչների միության (ՀԹԳՄ) կազմակերպած «Արտավազդ» մրցանակաբաշխությունն էր: Առդեն վեցերորդ տարին՝ սկսած 1999 թ., կազմակերպվող այս միջոցառումը մրցանակներ է նախատեսում թատերական գործիչների եւ բեմարվեստի ներկայացուցիչների համար՝ այդ կերպ գնահատելով նրանց կատարած շնորհակալ աշխատանքը:

Մրցանակաբաշխությունը սկսվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի շնորհավորական խոսքով, որն ընթերցեց ՀԹԳՄ նախագահ Եվանդ Ղազանչյանը: Այնուհետեւ որն Ղազանչյանը հյուրերին ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դժվար աշխատանքը մրցանակակիրներին ընտրելիս, ապա եւ ավելացրեց, որ այս տարվա մրցանակակիրների շարքում մեծ տեղ են գրավում երիտասարդները, իսկ դա նշանակում է, որ կյանքն առաջ է գնում: Ցերեկույթի ժամանակ հանձնվեցին 11 մրցանակներ՝ 3 «Արտավազդ» արձանիկ եւ 8 նույնանուն մեդալ:

Առաջին մրցանակը՝ բեմարվեստին արժանապատիվ եւ անբասիր նվիրվածության համար, հանձնվեց Վարսիկ Գրիգորյանին: 2004-2005 թթ. թատերաշրջանի լավագույն ներկայացումը համարվեց Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի բեմադրած «Մակբեթ» ներկայացումը: «Արտավազդ» արձանի հանձնվեց թատրոնի գեղարվեստական ղեկավար **Արմեն Խանդիկյանին**, որը շնորհակալություն հայտնեց 20 տարի առաջ թատրոնն իրեն վստահած իր վարպետին՝ Հրաչյա Ղափլանյանին եւ Տիգրան Լեւոնյանին, որին էլ նվիրված էր ներկայացումը:

«Լավագույն տղամարդ դերասան» անվանակարգում մրցանակ հանձնվեց **Վլադիմիր Մսրյանին**, իսկ «Լավագույն կին դերասան» անվանակարգում՝ **Աննա Էլբակյանին**: Հակոբ Ղազանչյանի կազմակերպած միջազգային նախագծում լավագույն կին դերասանուհի անվանակարգում մրցանակ շնորհվեց գերմանուհի **Բեատե Էյլերսին**:

«Ցարենցի ուղղիչ տունը» ներկայացման համար լավագույն բեմանկարիչ ճանաչվեց **Ռոբերտ Էլիբեկյանը**: Տարվա լավագույն դեբյուտ մրցանակը շնորհվեց «Գոյ» փորձարարական թատրոնի «Իմ մահը» ներկայացման երիտասարդ համառեժիսոր **Արա Մանուչարյանին**: Երիտասարդ ստեղծագործողների շարքը շարունակում է Սունդուկյանի անվան թատրոնը՝ «Փսիխոզ 4.48» տարվա լավագույն երիտասարդական ներկայացումը:

Ժամանակակից դասական Աղասի Այվազյանի աշխատանքը գերազանց բեմադրելու եւ ընտրած գեղագիտությանը լավագույնս ծառայելու համար մրցանակ տրվեց Մայլյանի թատրոնի ռեժիսոր **Նարինե Մայլյանին**: Երեւանի կամերային թատրոնի գեղարվեստական ղեկավար **Արա Երնջակյանին** «Արտավազդ» մեդալ շնորհվեց թատրոնի ստեղծման եւ պահպանման համար:

ՀԹԳՄ-ն մրցանակ էր նախատեսել նաեւ Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար **Ալեքսանդր Գրիգորյանին**՝ Մոսկվայում Մեծ Ելեոնի 90-ամյակին նվիրված «Գազանը լուանի վրա» բեմադրության համար, որը տակայն կհանձնվի Երեւանում ներկայացման պրեմիերայի ժամանակ՝ ապրիլի 7-ին:

Մրցանակաբաշխության վերջում հայտարարվեց նաեւ, որ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը Կապանի եւ Գորիսի թատրոնների աջակցման համար մեկական մլն դրամ է տրամադրել հիշյալ թատրոններին:

Չմոռանանք նշել նաեւ, որ հայ թատրոնին աջակցելու համար շնորհակալագիր հանձնվեց նաեւ «Մուլտի ագրոյի» նախագահ տիկին **Ռոզա Ծառուկյանին**:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ներողություն ներողության հետեւի՞ց

Կիրկորովը կարիերայի «դժվար» ուղի է ընտրել

Սուպֆիլմի հերոս ոինգվին Վինը միշտ այդպես էր անում, սկզբում անում էր այն, ինչ ուզում էր, հետո նոր հարցնում էր ծնողներից: Պարզվում է՝ մեր շոու բիզնեսով զբաղվողներից ոմանք էլ են նույն սկզբունքը որդեգրել: Արդեն հինգ օր մեր համաքաղաքացիները Ֆիլիպ Կիրկորովի, Անաստասիա Սոցկայայի կողքին կարդում էին Անդրեի անունը: Սակայն պարզվեց, որ համերգի կազմակերպիչների եւ Անդրեի ցանկությունները չեն համընկնում: Անդրեն դեմ է եւ չի երգի: «Ես դրանով պատրաստում եմ իմ անունը, չեմ ուզում, որ Հայաստանում Կիրկորովի «ընկած» անունի պատճառով իմ անունն էլ «ընկնի», ասում է երգիչը:

Ըստ ցուցադրաստաների, գովազդային հոլովակների՝ համերգին մասնակցելու են նաեւ երգչուհիներ Վարդուհի Վարդանյանն ու Անչոկը: Ցավոք, երգչուհիներից ոչ մեկից չկարողացանք պարզաբանումներ ստանալ այդ մասին:

Երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ Երեւանում համերգների կազմակերպիչ «Մանուկյան» ՍՊԸ-ի մամուլի քարտուղար **Թեհմինե Հայրումյանը** հավաստիացրեց, որ համերգը կայանալու է, եւ ոչ ոք չի կարող խոչընդոտել դրան: Կազմակերպված համերգի, հայ երգիչների մասնակցության մասին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում գերադասեցին ոչինչ չասել: «Ամսի 18-ին լավ համերգ ունենք», ասացին: Իսկ «Նոր Ջորջերդ» ռեստորանային համալիրում ասացին, որ ծրագրում փոփոխություններ չեն լինի, պարզապես մասնակցությունից հրաժարված երգիչների փոխարեն ուրիշները կհրավիրվեն:

Մինչ մեր համաքաղաքացիները, արդեն տոմս գնած մարդիկ փորձում են համերգի մասին կանխատեսումներ անել, հետաքրքրական կլիներ լսել մեր երկրում պրոդյուսերական գործի մասնագետների գնահատականը: Նրանք, սակայն, գործընկերոջը չթերագնահատելու համար խուսափում են որեւէ կարծիք հայտնել: Փոխարենը, սակայն, խոսում են հայ էստրադայի ներկայացուցիչները: «Խոսքը ոչ թե երգիչ Կիրկորովի, այլ նրա մարդկային տեսակի մասին է, **«Ազգի»** հետ զրույցում ասաց **Շուշան Պետրոսյանը**: Ես կարող եմ լսել կամ չլսել նրան, սակայն երբ խոսքն իմ հայրենիքի մասին է, չեմ կարող մասների արանքով վերաբերվել, որ ամեն մի վաճառված հոգով ախմախ գա եւ երգի այստեղ»: Մեր այն հարցին, թե գուցե պետք է պատասխաններ պոկելու եւ այրելու փոխարեն ավելի քաղաքակիրթ պայքար ընտրել, երգչուհին ասաց. «Ես իմ կոիվը տալիս եմ իմ խոսքով, իմ խոսքը հայերեն է ու շատ ազնիվ»:

Շուշան Պետրոսյանի գնահատականով՝ այս հարցի վերաբերյալ մտավորականները այսօր անտարբեր են: «Ես վիրավորվում եմ, երբ ասում են. «Քեզ պե՞տք է, որ խոսում ես»: Բա որ ինձ պետք չէ, ո՞ւմ է պետք: Հենց մտավորականները պետք է ցավեն»: Փոխարենը նա ուրախ է, որ երիտասարդներն են ակտիվ, շատ լավ է վերաբերվում նրանց նախաձեռնությանը, բոյկոտին: «Սա շատ փոքրիկ առիթ է, բայց այդ փոքրիկ-փոքրիկ առիթները միանում եւ կերպար են ստեղծում, հետո կրթում նրանց», համոզված է երգչուհին:

Ասուլիսի ժամանակ Թեհմինե Հայրումյանը հայտարարեց, որ «ակնհայտ է, որ երգիչը Հայաստան է գալիս իր գործած երբեմնի սխալներն ուղղելու նպատակով»: Հետաքրքրական է՝ Կիրկորովն արդեն գիտե՞ այդ մասին, թե կազմակերպիչներն այս հարցում էլ են «պինգվինավարի» մտածել, եւ Կիրկորովին այս մասին ավելի ուշ տեղյակ կպահեն:

Նախատեսվում է երգչի այցը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, թանգարան: «Հարկավոր չէ, որ ինքը գա, գնա պանթեոն, Ծիծեռնակաբերդ, ինքը արդեն թքել է այդ ամենի վրա», ասաց երգչուհի Շուշան Պետրոսյանը:

«Նա գալիս է գրեթե առանց հոնորարի, ասաց Հայրումյանը: Մենք ուզում ենք, որ նա նվեր մատուցի հայ կանանց»: Հայ կանանցից մեկին՝ Իրինա Արոյանին վիրավորելու մասին խոսելը ընկերության ներկայացուցիչը ծիծաղելի է համարում, քանի որ «ճիշտ է, ամոթ է, որ նա կնոջ է վիրավորել, սակայն Կիրկորովն արդեն ներողություն է խնդրել լրագրողից, փոխհատուցել բարոյական վնասը: Իսկ թուրական երաժշտություն նա չի քարոզում, ավելին, ասել է, որ այդ քայլը չմտածված, ժամանակավրեպ էր եւ ոչ տեղին»:

Համերգի կազմակերպիչները, պարզվում է, բավականին ներողամիտ են, եւ ըմբռնումով են մոտենում Կիրկորովի սխալներին: «Ընդունենք, որ երգիչը ծնվել եւ մեծացել է հայրենիքից, նրա ավանդույթներից ու մշակույթից հեռու եւ չի սացել հայեցի դաստիարակություն», ասում են նրանք ու դրանով, փաստորեն, հանդուրժողականություն քարոզում: Մենք, սակայն, շատ բան չենք ուզում: Մենք էլ ներողամտաբար վերաբերվելով ենք ասում. եթե ամաչում ես, որ հայ ես, ավելի լավ է՝ մի արի Հայաստան: Թե չէ հետո էլ սիրված ես լինելու թուրքերից ներողություն խնդրել, որ Հայաստանում ես երգել: Դժվար է ներողությունների վրա կարիերա ստեղծել:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

«Ապոլլոն» հրատարակչություն Երեկ, այսօր եւ վաղը

Թվում է, թե ինֆորմացիայի այս մեծ աշխարհում գիրքն ու գրականությունը մտել են փակուղի՝ իրենց տեղը զիջելով հեռուստատեսությանն ու համակարգչին: Սակայն այլ կարծիք է ստեղծվում, երբ մտնում ես «Ապոլլոն» հրատարակչություն ու զրուցում հրատարակչության խմբագիր Վարուժան Այվազյանի հետ: Խմբագրի վկայությամբ, գիրքն է բարձրացնում մարդու ինտելեկտը եւ նրանք աշխատում են՝ ելնելով երիտասարդների շահերից:

«Ապոլլոն» հրատարակչությունը հիմնադրվել է 1991 թ: Հիմնադրման առաջին օրվանից հրատարակչության խմբագիրն ու խմբագրական կազմն ունեին մեկ գլխավոր գերխնդիր՝ ներկայացնել համաշխարհային գրականության լավագույն գործերը: Այդ ժամանակ դժվարին ու ծայրաստիճան անբարենպաստ պայմաններում էին աշխատում հրատարակչության աշխատողները: «Բնականաբար, կային դժվարություններ: Ամենամեծ դժվարությունը թղթի պակասությունն էր: Բայց հետագայում կարողացանք այդ խնդիրն էլ լուծել, եւ այլ կերպ դասավորվեց հրատարակչության ճակատագիրը»:

Հետագա տարիներին հրատարակվեց 250 անուն գրականություն (Կաֆկա, Քամյու, Ֆոլկներ, Բորխես), մատենաշարեր: Նաեւ տպագրվեցին կաթողիկոսների կենսագրականներ: Տպաքանակը հասավ մինչեւ 40 հազարի: Այսօր «Ապոլլոնի» գերխնդիրն է ստեղծել մշակութային քաղաքականություն:

- Ինչ եք հասկանում մշակութային քաղաքականություն ասելով:

- «Ապոլլոնի» մոտեցումը դեռի մշակույթ այլ կերպ է: Հրատարակչության առաջին տարիներից շատերն առաջարկում են մեզ հրատարակել իրենց գրքերը, բայց «Ապոլլոնը» հիմնականում մերժում է, քանի որ նրանք խաթարում են գրականության զարգացմանը: Ինչ եմ հասկանում մշակութային քաղաքականություն ասելով: Պատկերացնում եմ հսկայական եւ ծավալուն գործընթաց, որի արդյունքում պետք է հրատարակվեն ու ընթերցողի դատին ներկայացվեն հայկական եւ արտասահմանյան գրականության լավագույն գործերը: Անհնար է մի քանի գիրք տպագրելով մշակութային քաղաքականություն ստեղծել:

- «Ապոլլոնն» այդ քաղաքականությունը սկսե՞լ է:

- Մասամբ այո: 90-ականներին «Ապոլլոնի» մոտեցումը դեռի գրականությունը բազմացավ: Հրատարակվեցին բազմաթիվ սնտեսագիտական գրքեր, որոնք արտերկրի դպրոցների համար հանդիսանում են բարձրագույն մասնագիտական գրքեր: Այնուհետեւ փոխկապակցեցին մշակույթն ու կյանքը: Հրատարակվեցին փիլիսոփաներ Ժորժ Բարայի, Թեոդոր Ադորնոյի գրքերը: Կարծում եմ, սա մշակութային քաղաքականության սկիզբն է:

- Ինչպիսի՞ն էր 2004 թվականն «Ապոլլոնի» համար:

- 2004 թ. հետաքրքրական եւ բեղմնավոր տարի էր հրատարակչության կյանքում: Հրատարակվեցին Ֆ. Կաֆկայի «Օրագրերը», Գ. Մահարու «Անանձնականը», հոբելյանական գրքեր՝ նվիրված Մուրացանին, Հ. Շիրազին, Գ. Սարյանին: Նաեւ «Գարուն» ամսագրում բացվեց նոր էջ, որտեղ ներկայացրինք մոտավորապես 30 երկրի մշակույթ հետեւյալ խորագրերով՝ «Մեզ հյուր է Նյու Յորքը», «Մեզ հյուր է Վենետիկը» եւ այլն:

- Ինչո՞վ է զարմացնելու իր ընթերցողներին «Ապոլլոնը» 2005 թ.:

- 2005-ը համեմատաբար աղքատ տարի է, հրատարակվելու են շատ քիչ գրքեր: Նախաձեռնել ենք հրատարակել համաշխարհային գրականության էպոսները: Առանձնապես ուշագրավ է գերմանական էպոսը՝ «Նիբելունգների երգը», որ հայերեն հրատարակվում է առաջին անգամ: Զուգահեռաբար տպագրվելու են այսօրվա մեր մտածողության ստեղծագործությունները: Հավանական է, որ աշնանը տպագրվի Արմեն Դավթյանի «Հայոց դիցարանը» գիրքը:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՒՅԱՄԱՐՏ

Քաղաքակրթական փլուզում, թե՞ մտածողության նոր որակ

Նկարչի տանը ներկայացված **Կամո Մկրտչյանի «Քաղաքակրթությունների խաչմերուկում»** նախագիծը որոնում է համաշխարհային քաղաքակրթությունների, գաղափարախոսությունների, մարդագրական-հասարակագրական անսովոր «քարտեզագրության» լաբիրինթոսում: Մարդկային հասարակության պատմության հազարամյակների ընթացքը մի նախագծի շրջանակներում խտացնելը որքան անընդունելի եւ տարօրինակ է, նույնքան հետաքրքրահարույց է, որտեղ փորձեր են արված պատասխաններ գտնել աշխարհաստեղծման ու մարդու գոյության իմաստավորման բարդագույն հարցերի...



XXI դարի մարդը հետահայաց մի ահռելի անդրադարձ է կատարում քաղաքակրթության ամենասկզբին՝ անտիկ շրջանի փիլիսոփայության համակարգերից, Արիստոտելից, Պլատոնից միջնադար ու վերածննդի ժամանակներ, ֆրանսիական լուսավորչական շարժում (Դիդրո, Ռուսո), գաղափարախոսությունների առճակատում, Լայբնից-Վոլտեր «երկխոսություն», հոգետր-կրոնական ուղղություններին ու հոսանքներին՝ բուդդիզմ-կարմա-քրիստոնեական արժեքներ, XX դարասկզբի գեղագիտական ուղղություններին՝ Դալլի, Պիկասո եւ այլք: Գերմանական փիլիսոփայություն՝ Նիցշե, Կանտ, մինչեւ դարասկզբի աշխարհամարտեր, ինքնաոչնչացնող կոիվներ, ցեղասպանություն, ահաբեկչություն: Եվ համաշխարհային գաղափարական-քաղաքական հախուռն օվկիանոսում՝ հայն ու հայկական հարցը, Արարատն ու մենք՝ գերտերությունների դիրիժորական փայտիկից առկախ ու մեր ճոճվող առագաստները պարզած նացիոնալիզմ-ֆեմինիզմ, սալինիզմ, կատաստրոֆիզմ եւ այլ իզմերին՝ պատմության գետի մեջ անվերջ հարցականներ կետադրած...

- Քաղաքակրթությունների խաչմերուկներում ի՞նչ է փնտրում այսօրվա մարդը, ո՞րն է նախագծի իմաստը:

- Քաղաքակրթությունը տեղից շարժելու, քաղաքակրթության տեսակը փոխելու, մարդուն ավելի կատարյալ դարձնելու, նրա պոտենցիալները սոցիալապես ավելի ապահովելու, մարդուն որպես արժեք բարձրացնելու:

- Որո՞նք են դրանց հասնելու ելքերը:

- Պետք է տեսնել այսօրվա պրոբլեմները, ժամանակի առաջ ծառացած ամենասուր հարցերը՝ սկսած մարդու իրավունքից ընդհուպ ազգի իրավունքները:

- Այստեղ՝ հատակին աշխարհի մեծագույն մտածողների ու արվեստագետների անուններն են, մենք անցնում ենք նրանց վրայով, թե՞ շրջանցում ենք:

- Շատ հստակ է, ունա՞նք ենք մենք քաղաքակրթության մեջ նոր քայլ կատարելու՝ մերժելով անցյալը, մեծ անհատականություններին, նրանց գաղափարները եւ բոլորովին նոր բան բերել մշակութային դաշտ:

- Ձեր այս նախագիծը՝ նկարչության լեզվով, որեւէ առնչություն ունի՞ անցյալի հետ, թե՞ անունները ու իրողությունները հիշատակելով է մերժում դրանք:

- Անցյալի հետ կապերը պահպանված է այն իմաստով, որ ֆրանսիական լուսավորչական շարժման սկզբունքներն են դրված այս նկարչական մտածողության հիմքում՝ ստեղծել կատարյալ աշխարհ եւ գերակա արժեք տեսնել մարդուն:

Կամո Մկրտչյանի նախագծի առավելությունն այն է, որ մտքերի փոխանակումների, հայացքների բախումների, նաեւ բանավեճերի լավ հնարավորություն է ստեղծում, ինչը եւ հավաստեց ցուցահանդեսի բացմանը մարդու իրավունքների պատասխան Լարիսա Ալավերդյանի հետ իր բավական հետաքրքրական զրույցը:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

«Ապոլլոն» հրատարակչություն Երեկ, այսօր եւ վաղը

Թվում է, թե ինֆորմացիայի այս մեծ աշխարհում գիրքն ու գրականությունը մտել են փակուղի՝ իրենց տեղը զիջելով հեռուստատեսությանն ու համակարգչին: Սակայն այլ կարծիք է ստեղծվում, երբ մտնում ես «Ապոլլոն» հրատարակչություն ու զրուցում հրատարակչության խմբագիր Վարուժան Այվազյանի հետ: Խմբագրի վկայությամբ, գիրքն է բարձրացնում մարդու ինտելեկտը եւ նրանք աշխատում են՝ ելնելով երիտասարդների շահերից:

«Ապոլլոն» հրատարակչությունը հիմնադրվել է 1991 թ: Հիմնադրման առաջին օրվանից հրատարակչության խմբագիրն ու խմբագրական կազմն ունեին մեկ գլխավոր գերխնդիր՝ ներկայացնել համաշխարհային գրականության լավագույն գործերը: Այդ ժամանակ դժվարին ու ծայրաստիճան անբարենպաստ պայմաններում էին աշխատում հրատարակչության աշխատողները: «Բնականաբար, կային դժվարություններ: Ամենամեծ դժվարությունը թղթի պակասությունն էր: Բայց հետագայում կարողացանք այդ խնդիրն էլ լուծել, եւ այլ կերպ դասավորվեց հրատարակչության ճակատագիրը»:

Հետագա տարիներին հրատարակվեց 250 անուն գրականություն (Կաֆկա, Քամյու, Ֆոլկներ, Բորխես), մատենաշարեր: Նաեւ տպագրվեցին կաթողիկոսների կենսագրականներ: Տպաքանակը հասավ մինչեւ 40 հազարի: Այսօր «Ապոլլոնի» գերխնդիրն է ստեղծել մշակութային քաղաքականություն:

- Ինչ եք հասկանում մշակութային քաղաքականություն ասելով:

- «Ապոլլոնի» մոտեցումը դեռի մշակույթ այլ կերպ է: Հրատարակչության առաջին տարիներից շատերն առաջարկում են մեզ հրատարակել իրենց գրքերը, բայց «Ապոլլոնը» հիմնականում մերժում է, քանի որ նրանք խաթարում են գրականության զարգացմանը: Ինչ եմ հասկանում մշակութային քաղաքականություն ասելով: Պատկերացնում եմ հսկայական եւ ծավալուն գործընթաց, որի արդյունքում պետք է հրատարակվեն ու ընթերցողի դատին ներկայացվեն հայկական եւ արտասահմանյան գրականության լավագույն գործերը: Անհնար է մի քանի գիրք տպագրելով մշակութային քաղաքականություն ստեղծել:

- «Ապոլլոնն» այդ քաղաքականությունը սկսե՞լ է:

- Մասամբ այո: 90-ականներին «Ապոլլոնի» մոտեցումը դեռի գրականությունը բազմացավ: Հրատարակվեցին բազմաթիվ սնտեսագիտական գրքեր, որոնք արտերկրի դպրոցների համար հանդիսանում են բարձրագույն մասնագիտական գրքեր: Այնուհետեւ փոխկապակցեցին մշակույթն ու կյանքը: Հրատարակվեցին փիլիսոփաներ Ժորժ Բարայի, Թեոդոր Ադորնոյի գրքերը: Կարծում եմ, սա մշակութային քաղաքականության սկիզբն է:

- Ինչպիսի՞ն էր 2004 թվականն «Ապոլլոնի» համար:

- 2004 թ. հետաքրքրական եւ բեղմնավոր տարի էր հրատարակչության կյանքում: Հրատարակվեցին Ֆ. Կաֆկայի «Օրագրերը», Գ. Մահարու «Անանձնականը», հոբելյանական գրքեր՝ նվիրված Մուրացանին, Հ. Շիրազին, Գ. Սարյանին: Նաեւ «Գարուն» ամսագրում բացվեց նոր էջ, որտեղ ներկայացրինք մոտավորապես 30 երկրի մշակույթ հետեւյալ խորագրերով՝ «Մեզ հյուր է Նյու Յորքը», «Մեզ հյուր է Վենետիկը» եւ այլն:

- Ինչո՞վ է զարմացնելու իր ընթերցողներին «Ապոլլոնը» 2005 թ.:

- 2005-ը համեմատաբար աղքատ տարի է, հրատարակվելու են շատ քիչ գրքեր: Նախաձեռնել ենք հրատարակել համաշխարհային գրականության էպոսները: Առանձնապես ուշագրավ է գերմանական էպոսը՝ «Նիբելունգների երգը», որ հայերեն հրատարակվում է առաջին անգամ: Զուգահեռաբար տպագրվելու են այսօրվա մեր մտածողության ստեղծագործությունները: Հավանական է, որ աշնանը տպագրվի Արմեն Դավթյանի «Հայոց դիցարանը» գիրքը:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հարություն Վարդանյան. «Խոսքեր չեմ գտնում ուրախությունս արտահայտելու»

Անդորրայի հետ հանդիպումը «Հանրապետական» մարզադաշտի տրիբունայից հետևում էր մեր ազգային հավաքականի ավագ Հարություն Վարդանյանը: Խաղից հետո նրա հետ կայացած զրույցում, բնականաբար, առաջին հերթին հետաքրքրվեցինք Հարությունի առողջական վիճակով:

- Ծանր վնասվածքի պատճառով զրկվել եմ խաղալու հնարավորությունից, ուստի այսօր տրիբունայից եմ հետևում խաղընկերներիս գործողություններին: Վիրահատությունից հետո ինձ շատ լավ եմ զգում: Ճիշտ է, դեռևս ցավում է, սակայն դա նորմալ երևույթ է, ամեն ինչ նորմալ է ընթանում: Նոր եմ սկսել մարզումները, բայց ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ: Առայժմ փորձում եմ մարզասարքերի միջոցով վերականգնել մկանային համակարգիս աշխատանքը: Աստիճանաբար կավելացնեմ ծանրաբեռնվածությունը: Հույս ունեմ 3 ամսից վերադառնալ խաղադաշտ:

- Հարություն, ի՞նչ տպավորություն թողեց խաղը:

- Շատ ուրախ եմ հաղթանակի համար, խոսքեր չեմ գտնում արտահայտելու ուրախությունս: Ես չէի կարող չժամանել Երևան, չգտնվել տղաների կողքին, բառյարես չաջակցել մարզիչներին ու խաղընկերներիս: Շատ գոհ եմ տղաներից, որ ներդրեցին իրենց ողջ կարողություններն ու հասան հաղթանակի, ուրախացրին մեր ժողովրդին: Թե՛ հյուրանոցում, թե՛ խաղից առաջ հանդերձարանում խոսել եմ տղաների հետ, ասել, որ անպայման պիտի հաղթենք: Թեև խաղին հետևում էի տրիբունայից, սակայն հոգով ու սրտով տղաների հետ էի խաղադաշտում: Երկուշաբթի առավոտյան մեկնում եմ Շվեյցարիա, իսկ մարտի 29-ի երեկոյան մեքենայով կուղևորվեմ Հոլանդիա՝ կրկին գտնվելու խաղընկերներիս կողքին եւ աջակցելու նրանց: Հուսանք, որ Հոլանդիայում էլ ոչխար «խերով» կլինի:

- Պատշաճների խաղն ինչպե՞ս կգնահատես: Այսօր էր դիրքում հանդես էր գալիս երիտասարդ Ռոբերտ Արզումանյանը: **Ի՞նչ տպավորություն թողեց նորեկը:**

- Թեև մրցակիցը հիմնականում լրիվ կազմով պատշաճվում էր եւ հազվադեպ էր անհանգստացնում մեր պատշաճներին, սակայն վերջիններս հստակ կատարեցին իրենց պարտականությունները, հարկ եղած դեպքում էլ ակտիվորեն մասնակցում էին գոհերին: Արզումանյանն իրեն վատ չդրսևորեց, շատ գրագետ էր գործում, ճիշտ դիրք ընդունելու ունակությամբ է օժտված: Առաջին անգամ էի նրա խաղը տեսնում, լավ տպավորություն թողեց: Զգացվում էր, որ հեռանկարային ֆուտբոլիստ է: Հույս ունեմ, որ հետագայում նա ավելի կկատարելագործի վարպետությունը եւ արժանի փոխարինող կդառնա մեզ:

- Արթուրի առողջական վիճակն ինչպիսի՞ն է, նրան ե՞րբ կտեսնենք խաղադաշտում:

- Արթուրը վնասվածքից արդեն ապաքինվել է եւ սկսել է մարզումները: Նա ինձանից շուտ վիրահատվեց, ուստի հուսով եմ, որ կկարողանա շուտով վերադառնալ խաղադաշտ:

Տորեսի ճակատագիրն առայժմ անհայտ է

Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, լեհերից ջախջախիչ պարտությունից հետո երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ, բրազիլացի Կառլոս Ալբերտո Տորեսը հրաժարական է տվել: Սակայն առայժմ հայտնի չէ Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիայի տեսակետն այդ հարցում: Ի դեպ, Տորեսն այդ տեղեկությունն առայժմ չի հաստատել:

Բրազիլացի մասնագետը վերջերս երկարաձգել էր պայմանագիրը ֆեդերացիայի հետ մինչեւ ընտրական մրցաշարի ավարտը: Նրա գլխավորությամբ Ադրբեջանի հավաքականը 15 հանդիպում է անցկացրել, որոնցում տոնել է 2 հաղթանակ, 6 խաղ ավարտել է ոչ-ոքի, 7-ում պարտվել է: Գոհած եւ բաց թողած գնդակների տարբերությունն է 11-29: Ի դեպ, լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում Տորեսը նշել է, որ լեհերի հետ խաղից ավելի լավ արդյունք էր սպասում: Նա նաեւ ավելացրել է, որ այս պահին ավելի ճիշտ կլիներ շարունակել աշխատանքը հավաքականում:

Ընդհանրապես Տորեսին չեն սիրում Ադրբեջանում: Բրազիլացի մասնագետին խիստ քննադատել է ադրբեջանական «Ինտերի» գլխավոր մարզիչ, Ուկրաինայի նախկին հանրահայտ ֆուտբոլիստ Անատոլի Կոնկովը՝ գտնելով, որ Տորեսն Ադրբեջան է ժամանել պարզապես փող վաստակելու նպատակով, որ վերջինս նույնիսկ ներկա չի գտնվում ազգային առաջնության հանդիպումներին: Նա նաեւ բացատրել է, թե ինչու իր թիմի ֆուտբոլիստներին չի ցանկանում ազգային հավաքական գործուղել: Ըստ Կոնկովի, անիմաստ էր հավաքականի մրցուղերքը Տրինիդադ եւ Տոբագո, որտեղ ֆուտբոլիստները երկու շաբաթ հանգստացել ու ավելորդ քաշով էին վերադարձել իրենց ակումբներ:

Ստուգումներ ֆրանսիական ֆուտբոլում

Ֆրանսիայի ֆինանսների նախարարությունն ու հարկային ոստիկանությունը համալիր ստուգումներ են կատարում երկրի ֆուտբոլի ֆեդերացիայում, ակումբներում եւ հեռատաքնկերություններում՝ փորձելով վեր հանել ֆինանսական խախտումները: Նրանց հետաքրքրում է խաղերի հեռարձակման իրավունքների, ինչպես նաեւ ֆուտբոլիստների տեղափոխման ժամանակ կատարված գործարքների օրինականությունը: Պարզվել է, որ 1998-2003 թթ. ընթացքում ավելի քան 30 ֆուտբոլիստի տեղափոխման համար վճարված գումարների չափը չի համապատասխանում փաստաթղթերում գրանցված թվին: Բացի այդ, Փարիզի դատախազությունը քրեական գործ է հարուցել «Canal+» հեռուստաընկերության կնքած գործարքի առնչությամբ: Այս հեռուստաընկերությունն առաջատար վեց ակումբների խաղերի հեռարձակման իրավունքը ձեռք բերելու համար 160 մլն եվրո էր վճարել թիմերին: Վերջերս Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պատշաճում ընտրված Ժան Պիեռ Էսկալետը հայտարարել է, որ ամեն կերպ կաջակցի իրավապահ մարմիններին:

Բլոխինը մնում է իր պատշտոնում

Կիեւի վճռաբեկ դատարանում քննության է առնվել Ուկրաինայի ազգային հավաքականի գլխավոր մարզչի պատշտոնում Օլեգ Բլոխինի աշխատելու օրինականության հարցը: Հիշեցնենք, որ այդ հարցով դատարան էին դիմել Ուկրաինայի Գերագույն ռադայի պատգամավորները, որոնց կարծիքով պատգամավոր Օլեգ Բլոխինն իրավունք չունի զբաղվելու մարզչական գործունեությամբ: Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիան պատշտոնական փաստաթղթեր էր ներկայացրել, որոնք հաստատում են, որ Բլոխինն աշխատել է հասարակական հիմունքներով եւ աշխատավարձ չի ստացել: Հաշվի առնելով դա, Կիեւի վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել, որի համաձայն Բլոխինն իրավունք ունի զբաղվելու մարզչական գործունեությամբ: Այսպիսով, Բլոխինը կրկին կգրաղեցնի Ուկրաինայի հավաքականի գլխավոր մարզչի պատշտոնը:

Ֆրիսկին սպառնում են

Շվեդ մրցավար Անդերս Ֆրիսկը որոշել է հրաժարվել խաղերի հետագա սպասարկումից: Պատճառը վերջին շրջանում «Չելսիի» երկրպագուներից ստացվող սպառնալիքներն են: Ֆրիսկը սպասարկում էր «Բարսելոնա»-«Չելսի» չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ հանդիպումը: Երկրորդ խաղակեսում նա դաշտից հեռացրել էր «Չելսիի» ֆուտբոլիստ Դիդիե Դրոգբային, ինչն էլ անգլիացիների պարտության պատճառ էր դարձել: Իսկ մինչ այդ, խաղի ընդմիջմանը Ֆրիսկը մտերմիկ զրույցի էր բռնվել «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Ֆրանկ Ռայկարդի հետ, ինչը հարուցել էր «Չելսիի» մարզիչ Ժոզե Մոուրինյոի զայրույթը: Վերջինս նույնիսկ պատրաստվում էր այդ փաստի վերաբերյալ պատշտոնական բողոք ներկայացնել ՈՒԵՖԱ-ին:

Մրցավարությունից հեռանալու Ֆրիսկի որոշումը մտահոգել է ՈՒԵՖԱ-ի մրցավարական կոմիտեին:

ՀՈԼԱՆԴԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Էյնդհովենում ՀՀ հավաքականին լուրջ փորձություն է սպասում

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում Հայաստանի ազգային հավաքականն այսօր Էյնդհովենում կմրցի Հոլանդիայի հավաքականի հետ: Այդ հանդիպման ուղիղ հեռարձակումը կսկսվի Հանրային հեռուստատեսությամբ Երեւանի ժամանակով 23.30-ից: Ընտրական առաջին խմբի առաջատար հոլանդացիների հետ խաղում մեր ֆուտբոլիստներին լուրջ քննություն է սպասվում: Անկեղծ ասած, Անդորրայի հավաքականի հետ դժգույն խաղից հետո այսօրվա մրցավեճի բարեհաջող ելքի հույսերը չնչին են: Ճիշտ է, հոլանդացիների հետ խաղին կմասնակցի փորձառու պատշտպան Սարգիս Հովսեփյանը, որը որակազրկման պատճառով հանդես չեկավ Անդորրայի հետ երեւանյան հանդիպմանը: Հոլանդացիների կազմում լուրջ կորուստներ կան: Ռումինացիների հետ խաղում վնասվածք ստացած Արիեն Ռոբենը չի մասնակցի հանդիպմանը: Նույն պատճառով կբացակայի նաեւ հավաքականի նորեկ Մարտին Մեերդինկը: Նրանց փոխարեն Հոլանդիայի ընտրանու գլխավոր մարզիչ Մարկո վան Բաստենը թիմ է հրավիրել Յան Հեսելինկին: «Էյնդհովենի» 26-ամյա հարձակվողը վերջին անգամ հավաքականում հանդես էր եկել 2001 թ. փետրվարին թուրքերի հետ խաղում:

Հայաստանի երիտասարդական հավաքականը երեկ ուշ երեկոյան Թիլբուրգում Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում ուժերը չափեց Հոլանդիայի իր հասակակիցների հետ:

Այսօր ընտրական առաջին խմբում կկայանան նաեւ Անդորրա-Չեխիա եւ Մակեդոնիա-Ռումինիա հանդիպումները: Չեխերի կազմում կբացակայի հավաքականի գլխավոր ռմբարկու Յան Կոլերը, որը վնասվածքի պատճառով չէր մասնակցել ֆինների հետ հանդիպմանը: Սպասվում է, որ մյուս հարձակվողը՝ Միլան Բարոշը վնասվածքից ապաքինվելուց հետո կրկին խաղադաշտ դուրս կգա: Ռումինացիներն էլ կազմում կորուստներ ունեն: Վնասվածքի հետեւանքով մակեդոնացիների հետ խաղին չեն մասնակցի Ադրիան Իլիեն եւ Միխայլե Պլեզանը: Իսկ ահա մակեդոնացիները կազմը համալրել են Վասկո Բոժինովսկիով:

Աղասին հաղթանակի հավակնորդների թվում է

Մայամիում անցկացվող թենիսի միջազգային մրցաշարերում հաջող ելույթներն է շարունակում Անդրե Աղասին, որը հերթական հաղթանակը տոնեց Կլեմանի նկատմամբ (6-2, 6-4): Իսկ ահա, Դավիթ Նալբանդյանն անհաջողության մատնվեց՝ զիջելով Ֆեդերերին (6-7, 1-6): Աղասու հաջորդ մրցակիցը կլինի արգենտինացի Գաուդիոն: 1/16 եզրափակիչում անհաջող հանդես եկավ Մարատ Սաֆինը: Նրա մրցակիցը Դոմինիկ Հրբատին էր: Մինչ այդ հանդիպումը, մրցակիցների կայացած 12 մրցախաղերում կողմերը 6-ական հաղթանակ էին տոնել: Հրբատին հաղթեց 7-6, 6-1 հաշվով: Պայքարը շարունակում է նաեւ Ռոջեր Ֆեդերերը, որը պարտության մատնեց Սաբալետային (6-2, 5-7, 6-3): Հաջորդ փուլ են մտել նաեւ Դենտը, Գաուդիոն, Մայերը, Հենմանը, Անչիչը:

Կանանց մրցաշարում բավական հաջող են խաղում ռուս թենիսիստուհիները: Իր հաղթաշարքն է շարունակում Մարիա Շարապովան, որն առավելության հասնելով Ասագոեի նկատմամբ (6-1, 6-2), մտավ քառորդ եզրափակիչ: Դեմենտեւան էլ հաղթեց իր հայրենակցուհի Գոլովինին (3-6, 6-2, 6-1): Հաջող են խաղում Ուիլյամս քույրերը: Հետաքրքրական է, որ քառորդ եզրափակիչում նրանք հանդիպելու են միմյանց հետ: Սերենան հաղթեց Լիխովցեւային, իսկ Վինուսը պարտության մատնեց Կասանոյին:

Step by Step Benevolent Foundation

Vacancy Announcement

Step by Step Benevolent Foundation is seeking applications for part-time position of Accountant.

The Accountant will be responsible for all transactions, connected with program, administrative expenses and payroll, monthly reporting to the Executive Director, Founder and local authorities, assisting program staff in preparing budget and operating it. This position is under the supervision of the Executive Director.

Qualifications will include:

- Masters degree in business, economics or accounting (MBA preferable);
- Strong organizational skills;
- Good knowledge of software programs: MS Excel and MS Access;
- Experience in working with accounting software;
- Good knowledge of Armenian taxation laws, reporting requirements and current reforms;
- Discretion and ability to handle confidential issues;
- Self-motivation with an abiliay to set and meet goals;
- Quick learning skills;
- Ability to work under pressure;
- Fluency in English, Armenian and Russian.
- Experience in an international organization is preferable;

For submission of applications/CVs, please, contact SBS BF at:
31 Giulbenkyan St, Apt. 20
Tel: 220442; 226996; E-mail: office@sbsbf.am
Deadline for submission of applications is April 8, 2005, 5:00 pm.

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամը

«Քննադատական մտածողության զարգացումը կարդալու եւ գրելու միջոցով» ծրագրի շրջանակներում Հայաստանի միջնակարգ դպրոցների ուսուցիչների, ուսուցիչների կատարելագործման խնդիրներով զբաղվող մասնագետների եւ մանկավարժական բուհերի դասախոսների համար կազմակերպում է վերապատրաստման վճարովի դասընթացներ, որին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

1. Դիմում
2. Ինքնակենսագրություն (CV) տեղեկություններ կրթության, աշխատանքային գործունեության, լրացուցիչ հետաքրքրությունների մասին):

Փաստաթղթերը ներկայացնել եւ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ «Քայլ առ քայլ» ԲՀ գրասենյակում:

Հասցեն՝ Երեւան, Գյուլբենկյան 31, բն. 20, հեռ. 226996, 220442:

COAF
CHILDREN OF ARMENIA FUND

Սի. Օ. Էյ. Էֆ Հայաստանի մանուկների հիմնադրամի «Հայաստանի գյուղական վայրերի զարգացում» փորձնական ծրագիրը հայտարարում է մրցույթ՝ կաղալառու կազմակերպության ընտրության համար:

Հիմնադրամի ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի համայնքապետարանի շենքի մի մասի վերանորոգման եւ ջեռուցման համակարգի իրականացման աշխատանքներ:

Շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ մրցութային փաթեթները Սի. Օ. Էյ. Էֆ Հայաստանի մանուկների հիմնադրամի գրասենյակից մինչեւ ս. թ. ապրիլի 7-ը, ժամը 17.00-ը, հետեւյալ հասցեով՝ Երեւան, Երվանդ Քոչար 13: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Նեկտար Մելիքյանին 57-52-54, 57-53-55 հեռախոսահամարներով:

«Ազգ օրաթերթ» ՍՊԸ-ի
տարեկան ֆինանսական հաշվետվություն 2004թ.

Համախառն եկամուտ /հազ. դր./ այդ թվում՝	56556.0	Ծախսեր /հազ. դր./ այդ թվում՝	56005.8
Հայտարարություններ եւ գովազդ	27062.4	Թերթի տպագրման եւ լրագրային թղթի	16102.0
Թերթի իրացում	29381.0	Աշխատավարձ, հոնորար եւ սոց. վճար	18809.6
Աշխատավարձ	112.6	Թերթի իրացման	8246.1
		Այլ	12848.1
Համախառն հաշվառական շահույթ	550.2		

Տնօրենություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ԳՀԱՇՁԲ - 05/5 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար « Բագրատաշենի, Ագարակի և Բավրայի անասնաբուժական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում » աշխատանքների ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1000.0 ՀՀ դրամ փոխանցել «Միջինվեստբանկ» Հ/Հ 175004670790 «Գոհակ» ՍՊԸ-ին և սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երևան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25 Գ.Մարկոսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաև անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչև դրանց բացման պահը՝ 2005 թվականի ապրիլի 13-ը, ժամը 15:00-ն:

Դրամավարկային տեղեկատու

Մարտի 18-24-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 2 մլրդ 473 մլն դրամով եւ մարտի 24-ին կազմել 120 մլրդ 715 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) աճել են 50 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 2 մլրդ 423 մլն դրամով:

Մարտի 11-18-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է 3 մլրդ 775 մլն դրամով եւ մարտի 18-ին կազմել 266 մլրդ 48 մլն դրամ (ընդգրկված են 20 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ նվազել է 2 մլրդ 197 դրամով, կազմելով 86 մլրդ 732 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները նվազել են 548 մլն դրամով եւ կազմել 35 մլրդ 496 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդներն աճել են 1 մլրդ 123 մլն դրամով եւ կազմել 15 մլրդ 469 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 2 մլրդ 153 մլն դրամով եւ կազմել 128 մլրդ 350 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 63 մլրդ 120 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 1 մլրդ 738 մլն դրամով), ժամկետայինները՝ 65 մլրդ 230 մլն դրամ (նվազումը՝ 416 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Մարտի 18-24-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել են 1 մլրդ 500 մլն դրամի 8-ամյա ՊՊ՝ 6,9300 տոկոս տարեկան եկամտաբերությամբ եւ մարվել 500 մլն դրամի 52-շաբաթյա ՊՊ՝ 5,8889 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը ներգրավել է 3 մլրդ 300 մլն դրամի ավանդ՝ տարեկան 1,75 տոկոս տոկոսադրույքով եւ մարել 5 մլրդ 740 մլն դրամի ավանդ՝ տարեկան 1,75 տոկոս տոկոսադրույքով:

Արտարժույթի շուկա

Մարտի 18-24-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեւորվել է 1,18 տոկոսով՝ 468,23 դրամից հասնելով 462,77 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 51,330 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 465,55 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը գնել է 3 մլն ԱՄՆ դոլար՝ 457,75 դրամ փոխարժեքով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL
ԱՐՄԵՆԱԿԱՆ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻԱ
ARMENIA TELEPHONE COMPANY

«Արմենտել»-ը հայտարարում է միջազգային բաց մրցույթ էլեկտրամոնտյորի KM 1 տեսակի 346 զույգ, KM 2 տեսակի 348 զույգ ճանկերի եւ 631 հատ պահպանման գոտիների մատակարարման համար:

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան անհատ ձեռնարկատերեր եւ կազմակերպություններ: Տեղական կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին՝ պետք է գրանցված լինեն պետական ռեգիստրում:

Մրցույթի առաջարկները կգնահատի մրցութային հանձնաժողովը: Հանձնաժողովը որոշումներ կընդունի ձայների պարզ մեծամասնությամբ: Հաղթողին որոշելու կարգը (գնահատման չափանիշները), մրցութային լոտի նկարագրերը մանրամասն նկարագրված է «Մրցույթի կանոնակարգ-մրցույթի պայմաններ»-ում, որը շահագրգիռ անձինք կարող են ստանալ, ինչպես նաեւ հայտերը ներկայացնել 2005 թ.-ի մարտի 29-ից մինչեւ մայիսի 3-ը՝ ամեն աշխատանքային օր, ժամը 10:00 - 16:00 հետեւյալ հասցեով՝

«Արմենտել» ՀՁ ՓԲԸ, Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ՝ 374 1 28-70-66:

Մրցույթի հայտերի բացման նիստը տեղի կունենա 2005 թ.-ի մայիսի 10-ին, ժամը 11:00-ին հետեւյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, Երեւան 375033, «Արմենտել» ՀՁ ՓԲԸ, Գյուլբենկյան 30, 2-րդ հարկ, տեխնիկական բաժին, իսկ մրցույթի հայտերի ամփոփիչ նիստը՝ 2005 թ.-ի հունիսի 15-ին, ժամը 15:00-ին՝ նույն հասցեով:

«Արմենտել» ՀՁ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ տեղեկացնում է բաժանորդներին, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ս. թ. մարտի 22-ի թիվ 26 Ն՝ «Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին» որոշմամբ 2005 թ. մայիսի 1-ից ընկերության ծառայությունների համար սահմանվել են հետեւյալ սակագները.

- խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ 106,14 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- ջրահեռացման ծառայության մատուցման սակագինը՝ 8,21 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- կեղտաջրերի մաքրման ծառայության մատուցման սակագինը՝ 10,74 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

Ընդամենը՝ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման ծառայության մատուցման սակագինը՝ 125,1 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

- Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին՝

ա/ խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 8,6 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ/ ջրահեռացման եւ կեղտաջրերի մաքրման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 18,96 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացվող ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

- «Կարեն Դեմիրճյանի» անվան Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲԸ սպորտանյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագինը՝ 6,1 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի

«Միկա» փակ բաժնետիրական ադամիանդագրական ընկերություն
Հաշվեկշռային հաշվետվություն

Աղ. N 1

Անվանում	Տող	տարեսկզբին	տարեվերջին
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
1. Նյութական ակտիվներ			
Ֆիզիկական միջոցներ մնացորդային արժեքը			
արժեքը	0010	89655,8	87744
մաշվածություն	0011	100526,3	98207
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	0012	10870,5	10463
II. Ընթացիկ ակտիվներ	0150	89655,8	87744
1. Պաշարներ եւ հետաձգված ծախսեր			
Նյութեր			
Ցածրարժեք արագաշարժ առարկաներ	1160	960,7	1212
Մնացորդային արժեք			
արժեքը	0170	2985,9	2722
մաշվածություն	0171	5971,8	5444
2. Վերարժեւորվածների բաժինը	0172	2985,9	2722
Չվաստակած արտադրավճարների պահուստ			
3. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր	0200	103,2	207
Հաշվարկներ բյուջեի հետ			
Հաշվարկներ սոցիալական ապահովագրության եւ ապահովության գծով	0300	3026	2114
Այլ դեբիտորական պարտքեր	0310	70,8	41
4. Դրամական միջոցներ եւ բանկարժեք թղթեր	0370	1000	1000
Դրամարկղ			
Հաշվարկային հաշիվ	0460	6626,5	10154
Արժութային հաշիվ	0470	2002,2	868
Հատուկ հաշիվներ բանկերում	0480	7399,1	11404
Հաշվեկշիռ	0500	-	47734
Պասիվ	0540	113830,2	165250
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ			
Հաշվետու տարվա չբաշխված զուտ շահույթ	0650	50000	50000
Նախորդ տարվա չբաշխված զուտ շահույթ	0640	x	726
2. Կարճաժամկետ պարտավորություններ	0650	34038,4	34038
Առեւտրային պահուստներ			
Վնասների պահուստներ եւ այլ տեխնիկական պահուստներ	0800	16443,5	10727
3. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր			
Հաշվարկներ բյուջեի հետ	0910	4727,4	2954
Հաշվարկներ վերարժեւորվածությանը			
փոխանցված գույքերի գծով	1000	8620,9	6680,5
Հաշվեկշիռ	1090	113830,2	165250

Աղ. N 2

Ֆինանսական արդյունքների մասին

	Տող	Հաշվետու ժամանակաշրջանում	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում
Ոչ կյանքի ապահովագրություն			
Ապահովագրավճարներ			
Ընդամենը	120	88284	118793
Վերապահովագրության փոխանցված			
գծով	130	(60739)	(83896,9)
Ապահովագրավճարներ			
զուտ վերապահովագրություն	140	27545	34896,1
Չվաստակած ապահովագրավճարների			
պահուստի փոփոխությունը			
Ընդամենը	150	2500	5014,9
Վերապահովագրողների բաժինը	160	104	(358,9)
Չվաստակած ապահովագրավճարների			
պահուստի փոփոխությունը			
զուտ վերապահովագրություն	170	2604	4656
2. Տեղի ունեցած վնասներ			
Հատուցված վնասներ (ապահովագ. հատուցումներ)			
Ընդամենը	180	(1159)	(6373,6)
Վերապահովագրողների բաժինը	190	539	791,1
Հատուցված վնասներ			
Զուտ վերապահովագրություն	200	(620)	(5582,5)
3. Վնասների պահուստի փոփոխությունը			
Ընդամենը	210	3218	388,7
Գործառնական ծախսեր	270	(22698)	(26778,2)
Ոչ կյանքի ապահովագրություն	280	10049	7580,1
Գործառնական այլ եկամուտներ	310	14402	16158,9
Գործառնական այլ ծախսեր	320	(21075)	(7742,4)
Գործառնական գործունեության			
արդյունքի շահույթ	330	3376	15996,6
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ	380	3376	15996,6
Շահութահարկ	400	(2650)	(3553,2)
Զուտ շահույթ	410	726	12443,4

Համաձայն ԱՁ աուդիտոր Ա. Իսխանյանի (լիցենզիա ԱԾ N 033, վկայագիր 01Ա087507) 14.03.2005 թ. աուդիտորական եզրակացության հաշվետվությունների ճանաչում են եւ հիշեցնում ընկերության ֆինանսական վիճակը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 29. 03. 2005 Գինը՝ 100 դրամ